

13-14 (303-304)  
7.05.2012թ.  
Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստրուքին եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԵՌԱՏՈՆԸ՝ ՆՈՐԱՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՐԹԱԿ

Հինգերորդ դարից սկսած մայիս ամիսը հայ ժողովրդի համար հաղթանակի խորհրդանշան է: Ավարայրից մինչև Սարդարապատ և Շուշի, շուրջ մեկուկես հազարամյակ, հայ մարտիկի ամուր ոգին սխրամբներ է հյուսել, մահու և կենաց կռվում հաստատել գոյության իր իրավունքը:

Հայրենական մեծ պատերազմում նույնպես հայ զինվորներն աչքի ընկան խիզախությամբ: Այնուհասակ փաստ է, որ այդ պատերազմում, բնակչության թվաքանակի համամասնությամբ, ոչ մի ազգ այնքան հերոսներ չի տվել, որքան հայ ժողովուրդը: Եվ դա այն դեպքում, երբ պատերազմական գործողությունները տեղի էին ունենում Հայաստանից հազարավոր կիլոմետրեր հեռու: Ոստիկանական ծառայության հասցեն նաև դեպի փոքրիկ Հայաստան էր ուղղված, ուստի խորհրդային երկրի մյուս ժողովուրդների հետ ուս տված, հայ ժողովրդի քաջագուն գավակներն էլ կցվեցին հայրենասիրության սուրբ գործին՝ արիության բազում օրինակներ ցույց տալով:

Մայիսյան հաղթանակների պակաս, սակայն, կարելի է համարել Արցախի հիմնավոր բերդաքաղաք Շուշիի ազատագրումը: Անշուշտ, Շուշիի կրակակետի ոչնչացումը ֆանտաստիկ ռազմագործողություն էր, որը հարուցել է ռազմարվեստի ճանաչված շատ տեսաբանների անթաքույց հիացումները: Հիմա էլ դարձյալ շատերին զարմացնում է, թե այդ ինչպես եղավ, որ տակավին պատերազմական փորձ չունեցող հայ կամավորականները կարողացան թվաքանակով ու զինվածությամբ մի քանի անգամ գերազանցող հակառակորդին դուրս չարտել բնական ամրոց համարվող Շուշիից: Եվ դա արվեց ռազմական արվեստի բոլոր կանոններով, ընդ որում շեշտենք՝ խաղաղ բնակչությանը հնարավորություն տալով անվտանգ դուրս գալ մարտական գործողությունների շրջանից: Մարդասիրական այդ քայլը միայն քաջերին է հատուկ, և կարծում ենք՝ հարևան Ադրբեյջանում տվյալ փաստը պետք է արժանավայել գնահատեն, այլ ոչ թե ավելի բորբոքեն ատելության կրակը...

Ազատամարտիկներին առաջնորդող մարտական ուժերն էր, որ Ավարայրից սկիզբ առնելով՝ հայոց ազգին ուղեկցում է մինչև մեր օրերը: Այդ ոգին նոր սխրամբների կնիքի հայ գորակահիմն, քանի դեռ թշնամին շարունակում է սպառնալ մեր հայրենիքի սահմաններին և վերջապես՝ քանի դեռ գերեզմարված Արարատ ունենք Արաքսից այն կողմ:

Շուշիի ազատագրումը նաև բարոյական մեծ նշանակություն ունեցավ: Ինչպես իր ելույթներից մեկում իրավամբ նշել է ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը, Շուշին հայ մարտիկին սովորեցրեց ապավինել սեփական ուժերին ու հաղթել: Հենց սեփական ուժերի հանդեպ վստահությունը արցախյան բանակին տարավ նոր հաղթանակների: Պատահական չէ, որ Շուշիի ազատագրման օրը, մայիսի 9-ը նաև համարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի ստեղծման օր: Ասել է թե՛ մեր զինված ուժերը ծնվել են պայքարի կրակներում, թրծվել Ազատամարտի քուրայում: Այդպիսի բանակին հաղթել գործնականում անհնար է: Այդպիսի բանակին իսկապես արժե վստահել երկրի սահմանների անվտանգությունը: Հիրավի՝ կեցցե Արցախի պաշտպանության փառապանծ բանակը: Պատշաճը մատուցենք բոլոր նրանց, ովքեր պլանավորել ու հաջողությամբ իրականացրել են Շուշիի փայլուն ռազմագործողությունը, ովքեր կանգնած են եղել զինված ուժերի ակունքներում և այսօր էլ իրենց ակտիվ մասնակցությամբ նպաստում են մեր բանակի առավել զորացմանը: Եվ հավերժ փառք մարտերում նահատակված ազատամարտիկներին:

Մայիսյան եռատոնը ազգային հպարտության այն հարթակն է, որի վրա պիտի խարսխվեն մեր հետագա հաղթանակները:

Շնորհավոր բոլորիս եռատոնը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

## ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԵՐԹԸ



Այս օրերին հանրապետության կրթօջախներում անցկացվում են արիության դասեր, որի նպատակը մատաղ սերնդի մեջ հայրենասիրական զգացումները էլ ավելի խորացնելն է: Արիության դասերն իրենց գործառնական նշանակությամբ խիստ կարևոր են, որովհետև միայն հայրենիքը սիրելով է հնարավոր այն անձնուրացորեն պաշտպանել:

Արցախի անկախությունը ձեռք է բերվել մեր ժողովրդի բազմաթիվ զրկանքների, նրա հերոս զավակների թափած արյան գնով, և պետք է սրբորեն պահպանել այդ նվաճումները: Սերնդեսերունդ փոխանցվող արիության գենը արթուն պահելու պարտավորությունը լավ են գիտակցում հատկապես մեր մանկավարժները, որովհետև նրանց ջանադրության արդյունքում, մեր աչքերի առջև, այսօր աճում է մի սերունդ, որը լավ ճանաչելով ազգի անցյալը՝ վստահաբար է նայում ապագային:

Եվ ընդհանրապես, ամեն մի ճշմարիտ դաս՝ արիության դաս է, որը բացառապես պիտի գերազանցորեն սերտել:

«Լուսարար»

## ՄԵՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՈՉ ՄԻԱՅՆ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՄԵՋ, ԱՅԼԵՎ ՄԵՑ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ ՏՈՆԵԼ

Մայիսյան եռատոնի նախօրեին արդեն ավանդույթ են դարձել հանրապետության կրթօջախներում անցկացվող արիության դասերը: Ամենախոշոր կրթական հաստատությունում՝ Արցախի մայր բուհում, մայիսի 4-ին հերթական արիության դասը վարեց ԼՂՀ պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը: Համալսարանականների հյուրն էր նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը:

Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի ուղեկցությամբ հյուրերը նախ հարգանքի տուրք մատուցեցին Արցախյան ազատամարտում զոհված ուսանողների հիշատակին՝ ծաղիկներ դնելով նրանց հուշաքարին:

Հանդիպմանը բացման խոսք ասաց ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը և շնորհավորեց ներկայներին հայ ժողովրդի համար թանկ ու պանծալի տոների առթիվ՝ արժևորելով դրանց իմաստը:

Իր խոսքում Պաշտպանության նախարարը յուրօրինակ պատմական էքսկուրս կատարեց՝ ներկայացնելով Մեծ Հայրենական մեծ ժողովրդի ունեցած ավանդը՝ մինչև ներկայիս ռազմաքաղաքական իրադարձություններ, խոսեց դրանց պատճառահետևանքային կապերի մասին:

Արցախի զինված ուժերի հրամանատարը մեր հայրերի, պապերի տարած հաղթանակն ուղղակիորեն կապում է Արցախյան պատերազմի հաղթանակի հետ, բանգի նոր սերունդն իր մեջ կրում է նախորդների ոգին: Շուրջ 50.000 արցախցի է մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, որից 26.000-ը չի վերադարձել՝ կյանքը նվիրաբերելով հայրենիքին: Արցախը բազմաթիվ հերոսներ, մարշալներ,

բարձրաստիճան զինվորականներ է տվել խորհրդային պետությանը: Մ. Հակոբյանի խոսքերով՝ Մեծ Հայրենականում տարած հաղթանակի ոգին և ռազմահայրենասիրական դաստիարակությունը իրենց դերն են ունեցել այսօրվա ավագ սերնդի վրա: Ինքը՝ նախարար Մովսես Հակոբյանը, զինվորական դառնալու որոշումը կայացրել է Չարդախլու գյուղում՝ մարշալ Բաղրամյանի տուն-թանգարանում նմանատիպ հայրենասիրական դասի ժամանակ: Նույնը տեղի է ունենում այսօր: Պաշտպանության նախարարի ներկայացմամբ՝ Արցախի պետական համալսարանի ուսանողական դառնալու եղել է Արցախյան շարժման առաջամարտիկների շարքում, իսկ հետագայում նրանցից շատերը համարվել են Պաշտպանության բանակի հրամանավոր շարքերը:

Անդրադառնալով Շուշիի ազատագրմանը՝ Մովսես Հակոբյանը խոսեց դրա անհրաժեշտության օբյեկտիվ պատճառների մասին, որոնցից մեկն էլ Շուշին ազատագրված տեսնելու՝ համայն հայության մշտական ցանկությունն էր: Բացի այդ, բերդաքաղաքը հակառակորդի կողմից վեր էր ածվել ռազմական հեռակետի՝ դառնալով չարիք Ստեփանակերտի և շրջակա բնակավայրերի համար: Քսան տարի առաջ դժվար էր պատկերացնել, որ կտոնենք Շուշիի փառապանծ հաղթանակը: Վերջինիս ռազմագործողությունն ապացուցեց, որ մենք կարող ենք ոչ միայն պաշտպանել մեզ, այլև մեծ հաղթանակներ տոնել: Շուշին բեկում էր և դարձավ մեր հետագա բոլոր հաղթանակների սկիզբը, ասաց Մովսես Հակոբյանը:

Աճող սերունդը պետք է լավ սերտի Պաշտպանության բանակի դասերը: Ինչո՞ւ է նրա ստեղծման օր համարվում Շուշիի ազատագրման օրը՝ Պաշտպանու-

թյան բանակի հրամանատարը տվեց հանգամանակից պարզաբանում: ԼՂՀ զինված ուժերի անցած ուղին հարուստ փորձ է ոչ միայն մեր հետագա սերունդների համար. ի դեմս բանակի երկրի պաշտպանությունն այսօր հուսալի ձեռքերում է: «Եթե, Աստված մի արասցե, պատերազմ սկսվի, մենք անպայման հաղթելու ենք», - վստահեցրեց ռազմական գերատեսչության ղեկավարը: Նրա խոսքերով՝ հրադադարի տարիներն օգտագործվել են նպատակային՝ բանակի հզորացման և մարտունակության բարձրացման համար: Բարձրացվել է նաև զինծառայողների կրթական ցենզը:

«Եթե խաղաղություն են ուզում՝ պատրաստվիր պատերազմի» խոսքերը մեզ համար արդիական են: Մենք պետք է հակառակորդին պարտադրենք խաղաղություն: Եվ վստահեցնում են, որ տարածաշրջանում տիրող ներկայիս խաղաղությունը միայն Արցախի բանակի բազկի ուժի շնորհիվ է», - ասաց Մ. Հակոբյանը:

Արցախի զինված ուժերի հրամանատարը նաև պատասխանեց ներկայների հարցերին: Որոշ հարցերի առնչությամբ պարզաբանումներ տվեց ԿԳ նախարար Վլադիկ Խաչատրյանը:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության անունից շնորհակալություն հայտնելով նման բովանդակալից դասախոսության համար՝ ռեկտոր Ստեփան Դադայանը համալսարանի կողմից տպագրված վերջին գրքերը նվիրեց հյուրերին՝ ինքը ևս նոր տպագրված գրքեր ստանալով ԼՂՀ պաշտպանության նախարարից:

Լուսարար ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐՁԱԿԱՆ ՄԱՅԻՍ

ԱՅՍՕՐԿԱ ՍԵՐՈՒՆՐԸ ՄԵՑ ՈԳՈՒ ԿՐՈՂՆ Է

Մայիսյան եռատոնի տոնակատարության ծրագրի շարքից են ԼՂՀ պաշտպանության ու կրթության և գիտության նախարարությունների ավանդական համատեղ անցկացվող շաբաթուրդային մրցույթը՝ հանրակրթական դպրոցների ավագ դասարաններում սովորող աշակերտների և ժամկետային զինծառայողների շրջանում, որի արդյունքների ամփոփումը հանդիսավորությամբ տեղի ունեցավ եռատոնի նախօրեին՝ ՊԲ սպայական ակումբում, երկու գերատեսչությունների ղեկավարների՝ ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Յակոբյանի և Վլադիկ Խաչատրյանի մասնակցությամբ:

Շաբաթուրդային արդյունքների վերլուծությամբ հանդես եկավ ՊԲ ԱԶՏԱ գծով բաժնի պետ, գնդապետ Նորայր Մկրտչյանը:

Ստեղծագործական մրցույթին մասնակցել են 21 գործասերից հարյուրից ավելի ժամկետային զինծառայողներ ու ավելի քան 180 դպրոցականներ և Ք. Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանի սաներ, որոնք իրենց մտորումներն ու խոհերն են կիսել «20-ամյա հաղթանակի բերկրանքը» խորագրով «Նամակ հորս քսան տարի անց», «Արցախ, քո ապագան իմ ձեռքերում է», «Խոստում են այդ տարիները. 1992-2012» և այլ թեմաների շուրջ: Նպատակն էր բացահայտել մատաղ և երիտասարդ սերնդի հայրենասիրական մղումները, ազգային արժեքների ու գաղափարների շուրջ մտորումները, ինչպես նաև Արցախյան գոյամարտի դասերն արժևորելու կարողությունը: Սա ևս մեկ քայլ էր նոր սերնդի մեջ բարձրացնելու ռազմահայրենասիրական դաստիարակության մակարդակը:

Մրցույթն անցկացվել է մարտ-ապրիլ ամիսներին երեք փուլով՝ դպրոցներում և գործասերներում, շրջաններում և միավորումներում և վերջինը՝ հանրապետական: Շաբաթուրդային մրցույթը ևս մեկ առիթ է բացահայտել ժամկետային զինծառայողների և դպրոցականների ներաշխարհը, հայրենիքի հանդեպ սուրբ պարտքը կատարելու տրամադրվածությունը, նրանց հայրենասիրության աստիճանը: Չէ որ նրանց է վստահվում մեր ժողովրդի անվտանգությունը, սերունդների կյանքի գնով ազատագրված հայրենիքի հետագա լինելությունը:

Կազմակերպիչների գնահատմամբ, մրցույթի անցկացումը լավագույն մոտեցումներից մեկն է իրագրվելու այսօրվա պատանիների ու երիտասարդների հոգում անթելված հուզումներին: Ներկայումս, երբ հրադադարը դեռևս խաղաղություն չէ և ամեն պահի կարող է խաթարվել, ռազմական արվեստի ուսուցման հետ կարևորվում է ոգու ամրության պահպանումը, որը «մատյան գունդ» է երկրի համար, և նրա բացակայությունը ճակատագրական է հատկապես փոքր ժողովուրդների համար: Մեկ անգամ էլ պարզ դարձավ, որ ներկա սերունդը Մեծ ոգու կրողն է: «Եվ քանի դեռ սուրն է կառավարում աշխարհը, ծիծեռու ճյուղով զինված լինելը պարզապես անմտություն է», - այսպես է մտածում այսօրվա ժամկետային զինծառայողը՝ կարևորելով ուժեղ լինելը: «Խոստում են տարիները...» թեմայի շուրջ մտորելիս ավագ սերժանտ Արտակ Մնացականյանը գրում է. «Կյանքը պատմություն է, յուրաքանչյուր ոք ապրելով՝ գրում է իր սեփական պատմությունը, և պետք է այդ պատմությունը գրել այնպես, որ չամաչես հետագայում: Առավել ևս, մենք՝ զինվորականներս, սխալվելու իրավունք չունենք»:

Դեռևս երիտասարդ տարիքում են խմորվում մարդու լավագույն հատկանիշներն ու զգացումները՝ սիրել հայրենիքը, հարգել շրջապատը և այն ամենը, ինչ համամարդկային

է: Եվ այդ ամենն արտացոլված է շաբաթուրդային մրցումներում: Բայց չէ՞ որ երիտասարդությունն է հասարակության շարժիչ ուժը, ասել է թե՛ նրա մեջ խտացված են ժողովրդի լավագույն գծերը:

Հայ զինվորը նաև վաղվա լուսաշող ապագայի հավատացողն է: ՊԲ զինծառայող Արմեն Մխչեյանը գրում է. «Կա՞մ ավելի վեհ զգացում, քան տեր լինել սեփական ազատությանը, հայրենի բարձրաբերձ լեռներից բացական չել՝ Արցախն ազատ է»: Հայրենիքին ծանայելու և նրա համար կյանքը չխնայելու



պատրաստակամությամբ է ամբողջանում երկրի, պետության, ժողովրդի ուժը, որն ունի **հաղթանակած բանակ** անունը: Ավագ սերժանտ Լևոն Միսակյանը, գրելով հորը, հետպատերազմյան շրջանում իրենց ընտանիքին բաժին հասած ճակատագրին է անդրադարձել՝ ասելով, որ իրենց տան պատերը ճաք են տվել խոնավությունից, առաստաղից կաթում է, ամաններ են դնում տակը, բայց ջուրն ամանների մեջ չի կաթում, այլ իրենց սրտերում՝ սառը կաթկթոցով: Մայրը հաճախ է իրերի դասավորությունը փոխում տան մեջ՝ այդպես է հիշում իր մանկությունը քսանամյա երիտասարդը: Սակայն նա հուսալքված չէ, որովհետև գիտի, թե հանուն ինչի է կրել այդ գրկանքները և շաբաթուրդային ավարտում է լավատեսական երանգով:

Ստեղծագործություններից մեկում այսպիսի միտք է արտահայտվում. հայրենիքի պաշտպան է նաև հողագործը, ով հացահատիկ կամ բանջարեղեն է արտադրում, ուսուցիչը, որը սերունդ է կրթում, բժիշկը, որը կյանք է պարզում: ՊԲ զինվորի խոսքում գերիշխում է վաղվա սերմնացանի հոգեբանությունը՝ հայրենիքի հզորությունը կայանում է նաև բերք ու բարիք արարելով:

Բոլոր շաբաթուրդայիններում գերիշխում է այն միտքը, որ ուժն է հաստատում ապրելու իրավունքը, հաղթում է նա, ով ուզում է հաղթել, ով հավատում է իր հաղթանակին, ով ունկնդրում է մայր հողի կանչին: «Մենք պիտի մեր թևերով, արմատներով ամուր գրկենք ու պինդ պահենք մեր ջքնաղ, մեր հրաշք, մեր դրախտավայր Արցախը», - գրում է աշակերտուհի Ռաֆիկե Ստեփանյանը:

Հաղթում են քաջությամբ, ոգով, հավատով ու հայրենասիրությամբ և ոչ թե քանակով: Ստեղծագործություններից պարզ է դառնում, որ նրանց համար հողը, ազգը, պատիվը, հայրենիքը ոչ թե սոսկ արժեքներ են, այլև գոյության իմաստ, ապրելու ձև ու բովանդակություն:

Ստեղծագործություններում կա գիտակցում, որ այսօրվա բարդ աշխարհաբաղաբա-

կան հարաբերությունների պայմաններում դարերին հնարավոր է ներկայանալ ինքնուրույն, ինքնատիպ ազգային արժեհամակարգով:

Արցախյան ազատամարտում հաղթանակի գլխավոր գրավակամը հայրենասիրությունն էր՝ մարդկային գլխավոր արժանիքը: Շաբաթուրդայինները մեկ անգամ ևս փաստեցին, որ նոր սերունդը հայրենասիրության պակաս չունի և ապրում է մի հաստատուն հավատով՝ ապագան մերը կլինի: «Գուցե դարերի համեմատությամբ աննշան են այս քսան տարիները, բայց մի բան հաստատ է. մեր անխափան ու անխտոր երթուղին արդեն նախանշված է: Մեր ազատամարտը, սակայն, դեռ չի ավարտվել, քանզի դեռ կա Հայոց հարցը: Ուրեմն՝ շարունակենք այն, որ էլ չխոսեն թնդանքները, և մեր հաջորդ սերունդներն էլ վայելեն նորանոր հաղթանակների բերկրանքը», - գրում է տասներորդ դասարանցի Անահիտ Շահրամանյանը:



Լավագույն են ճանաչվել զինծառայողների և դպրոցականների իննական ստեղծագործություններ՝ համապատասխանաբար արժանատիվ առաջին, երկրորդ և երրորդ տեղերին: Պաշտպանության բանակից 1-ին տեղ գրավել են ավագ սերժանտ Լևոն Միսակյանը, կրտսեր սերժանտ Արեն Սարգսյանը, եֆրեյտոր Արմեն Մխչեյանը, 2-րդ տեղ՝ կրտսեր սերժանտ Գոռ Վարդանյանը, շաբաթյան Դավիթ Սարգսյանը և ռազմամարզական վարժարանի սան Յուրի Աղաջանյանը, 3-րդ տեղ՝ ավագ սերժանտ Արտակ Մնացականյանը, շաբաթյան Դավիթ Մարտիրոսյանը, շաբաթյան Ա. Գիշյանը:

Դպրոցականներից 1-ին տեղին արժանացել են Ռաֆիկե Ստեփանյանը (Հաղորդի մ/դ., 10-րդ դաս., ուսուցչուհի՝ Լյուբա Մայիլյան), Անահիտ Շահրամանյանը (Ասկերանի շրջ., Խնասպտի մ/դ., 10-րդ դաս., ուսուցչուհի՝ Սուրայա Ղազարյան), Լուսինե Ավանեսյանը (Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոց, 12-րդ դաս., ուսուցչուհի՝ Հասմիկ Ավանեսյան):

2-րդ մրցանակային տեղ գեղեցիկ են

Լիլիթ Հարությունյանը (Մարտակերտի հ. 1 մ/դ., 10-րդ դաս., ուսուցչուհի՝ Նատաշա Պողոսյան), Ջոյա Ավանեսյանը (Մարտակերտի շրջ., Հաթերքի մ/դ., 10-րդ դաս., ուսուցչուհի՝ Գոհար Բեգլարյան), Ջոյա Ամիրջանյանը (Հաղորդի շրջ., Թաղատեղի մ/դ., 11-րդ դաս., ուսուցչուհի՝ Մելինե Դանիելյան):

3-րդ մրցանակային տեղ գրավել են Վարդուհի Սահակյանը (Ասկերանի շրջ., Այգեստանի մ/դ., 12-րդ դաս., ուսուցիչ՝ Վլադիմիր Վերոյան), Յուլյա Պողոսյանը (Մարտունու շրջ., Հերիերի մ/դ., 12-րդ դաս., ուսուցչուհի՝ Ջոյա Ապրեսյան), Արշալույս Գրիգորյանը (Մարտակերտի շրջ., Հաթերքի մ/դ., 10-րդ դաս., ուսուցչուհի՝ Արմիդա Իսկանդարյան):

Պաշտպանության նախարարի հրամանով հեղինակները պարգևատրվեցին պատվոգրով և արժեքավոր նվերներով: Պաշտպանության նախարարության պատվոգրին արժանացան նաև հաղթած դպրոցականների ուսուցիչները:

Դպրոցականներին և նրանց ուսուցիչներին պատվոգրով ու դրամական պարգևով պարգևատրեց նաև կրթության և գիտության նախարարը: Շուրջ երկու տասնյակ դպրոցականներ ցուցաբերած արդյունքների համար նախարարի հրամանով պարգևատրվել են ԼՂՀ կրթության և գիտության նախարարության գովասանագրով:

Շնորհավորելով ներկաներին և մեր ժողովրդին եռատոնի կապակցությամբ՝ պաշտպանության նախարար Մ. Յակոբյանը երախտագիտություն հայտնեց պարգևատրվածներին՝ և առանձնապես նրանց ուսուցիչներին՝ ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու համար: «Այն քարը, որ դրել եք բանակաշինության գործում, հիմնավոր է լինելու, և դրա վրա հետագայում կարողանալու ենք մեր անառիկ պարիսպները կառուցել և ստեղծել հզոր պետություն», - ասաց նա:

Իր հերթին շնորհավորելով կրթության և գիտության նախարար Վ. Խաչատրյանը հետևյալ նկատառումներն արեց. չնայած պարտադրված պատերազմում կրած ավերածություններին, կորուստներին, դաժան պայմաններին, դառնություններին՝ իրեն համարում է երջանիկ սերնդի ներկայացուցիչ, քանզի հենց իր սերնդին է բախտ վիճակվել իրականացնել պատերի դարավոր երազանքը՝ շահել հայրենիք, ձեռք բերել պետականություն ու փոխանցել սերունդներին: «Մեր սերունդը պատվով կատարեց իր պարտքը, բայց ավելի կարևոր խնդիր է հիմա՝ պաշտպանել, հզորացնել շահած երկիրը, որը նույնպիսի պատվով պետք է կատարի նոր սերունդը: Աշակերտները ճիշտ են հասկացել բանակի դերը՝ որպես գերագույն արժեք, որի մասին ամեն օր հոգ պետք է տանել, որովհետև այն մեր անվտանգության երաշխավորն է, մեր ողնաշարը, որի բոլոր ողերը պետք է լինեն առողջ»:

ԿԳ նախարարն ընդգծված երախտագի-

ՈՒՋՍԱՆՎՈՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱԿԻԴ ՓԱՌԸ ՍԱՐՍԱՓ Է ԱԶԴՈՒՄ ՄԵՐ ՆԵՆԳ ԹՅՆԱՄՈՒՆ

Երկիրն սկսվում է սահմանից, և սահմանամերձ բնակավայրերի բնակիչները նաև սահմանապահ են: Քաջաթաղի շրջանի սահմանամերձ Միջնավան քաղաքը փռված է Արաքսի ձախ ափին՝ Ողջի և Ծավ գետերի մեջտեղում: Քաղաքի վերաբնակեցմանը զուգընթաց՝ սկսեց գործել նաև միջնակարգ դպրոցը, որը կոչվում է մեր ժողովրդի բարեկամ Գալինա Ստարովոյտովայի անունով: Կրթօջախում սովորում է 61 աշակերտ, որից 10-ը՝ նախադպրոցական տարիքի. քաղաքում առայժմ մանկապարտեզ չկա: Մինչև վերջերս ոչ բարվոք վիճակում գտնվող դպրոցական շենքն արդեն հիմնանորոգվում է.



ընթացում են շինարարական աշխատանքներ, և շինարար Արտուշ Խաչատրյանը վստահեցրեց, որ սեպտեմբերի 1-ին աշակերտները մաքուր ու նորոգված դպրոց ութ կոնքեն: Բացի ուսումնական ծրագրերից, դպրոցում հաճախ են կազմակերպվում արտադպրոցական միջոցառումներ, որոնց մասնակից են ոչ միայն աշակերտները, այլև ուսուցիչներն ու հաճախ նաև ծնողները: Մայիսյան եռատոնին նվիրված բեմական հանդեսին ներկա լինելով՝ զգացի, որ մեծ աշխատանք է կատարվել: Դպրոցի բակը վերածվել էր զինվորական տարածքի. ամենափոքրից մինչև 12-րդ դասարանցիները՝ տղա թե աղջիկ, զինվորական հագուստով էին, գործում էր հոսպիտալը: Հանդեսին ներկա էին շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանը, նրա տեղակալները, աշխատակազմի ղեկավարը, կառույցների ղեկավարներ, մոտակա սահմանապահ ուղեկալի զինվորներ, քաղաքում բնակվող 15 ազատամարտիկներ, ծնողներ, հյուրեր: Դպրոցի տնօրեն Մարգարիտա Սարգսյանը շնորհակալություն հայտնեց միջոցառ-

մանը ներկա հանդիսատեսներին՝ ասելով. «Մայիսը Աստուծո կամոք մեր ժողովրդի համար հաղթանակների ամիս է՝ սկսած Ավարայրից, վերջացած Սարդարապատով, Մեծ Հայրենականով, Շուշիով: Հավաքվել

ենք տոնելու մեր հաղթանակը, որը կայացավ բազում ազատամարտիկների մաքառումների, արյան ու անձնուրացության գնով: Ապրելով այստեղ, շենքեցնելով մեր երկիրը՝ համոզված ենք, որ յուրաքանչյուր մանուկ մեծանում է որպես հայրենասեր»: Ապա աշակերտները ներկայացրին իրենց երգն ու պարը, որը դպրոցի ուսուցչական կազմի ու աշակերտների միացյալ աշխատանքն է: Դպրոցի զինվոր, ենթասպա Սերգեյ Կիրակոսյանի հրամանով երեք տղաներ բերում են Արցախի Հանրապետության պետական դրոշմը, հնչում է մեր պետական հիմնը: Եվ մանուկները՝ Սիրամարգ Շաղբաբյանի ղեկավարությամբ, ով նույնպես զինվորա-


կան համագեցնող էր, խմբով ու մեկիկ-մեկիկ ռազմահայրենասիրական երգերով, ասումներով, պարով, Մեծ Հայրենական ու Արցախյան ազատամարտի դրվագներ ներկայացնելով, կարողանում են ներկայանալ հավատացնել, որ իրենք են այս հողի տերը, և թշնամին ի գործ ունեննելով մեր տղաների արյամբ սրբացած հողին: Ավարտվում է մանուկ զինվորների ներկայացումը. բոլորը հուզված են: Շնորհակալության խոսք են ասում և որպես ՀՀ ԵԿՄ Քաջաթաղի տարածքային բաժանմունքի փոխնախագահ՝ ԵԿՄ պատվոգիր հանձնում դպրոցին և ազատամարտիկներ Միշա Մարգարյանին, Վահան Գասպարյանին և Մխիթար Մարտիրոսյանին: Վերջինս գեղեցիկ միջոցառման համար շնորհակալություն է հայտնում աշակերտներին, տնօրինությանը, ուսուցիչներին, ովքեր միասնաբար աշխատելով, կարողացան մոտ 2 ժամ հուզել ներկաներին: Հրաժեշտ տալով աշակերտ-զինվորասահմանապահներին՝ հավատացած են, որ մեր երկրի ապագան հուսալի ձեռքերում է, վստահ են, որ դպրոցը կնորոգվի,



Կգործի և մանկապարտեզ: Այդ վստահեցրել են նաև մեր իշխանությունները:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՔ ԶԻՆՎՈՐ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺ



Լրացավ Աշոտ Ապրեսյանի ծննդյան 50 տարին, տարիք, երբ ակամա ի մի ես բերում արվածն ու չարվածը, հետադարձ հայացք նետում անցած ուղուդ ու արժևորում կենսակերպի՝ հստակ գիտակցելով անելիքը խղճիդ առաջ, պատասխանափոխանդ դեմ հանդիման:

Հոգեբան՝ ելոթյամբ, զինվոր՝ գիտակցությամբ, մանկավարժ՝ կոչումով...

Արցախյան գոյամարտի դժնդակ օրերին, երբ օրհասական վիճակ էր շուրջըլորը, նա ստիպված էր ցած դնել գրիչն ու դասամատյանը և զենք վերցնել՝ հող հայրենին պաշտպանելու գիշատիչ ուսուցիչ: Եվ ոչ միայն բազկի ուժով, այլև տարիներով կուտակած գիտելիքների շտեմարանով կերտեց այսօրվա 20-ամյա եռատոնի խաղաղ առավուրդ, ստեղծագործ օրը՝ փառքով պսակելով «Ուսուցիչ» անունը:

Աշոտ Ապրեսյանի ստույգ հաշվարկների ու տեխնիկական հստակ գիտելիքների շնորհիվ ոչնչացվել է հակառակորդի երկու մարտական ռմբակոծիչ ինքնաթիռ, որն արժանվում էր գնահատվել պետության կողմից, և 2002թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով նա պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Հիրավի, նա հաղթանակն իր առնական ուսերին բերել է տուն՝ օջախն արցախյան ու շենացրել հող հայրենին:

2011թ. հոկտեմբերին մասնակցել է Բենիուր Փախյանյանի հիշատակին նվիրված ուսուցիչների գիտամեթոդական սեմինարին և մրցույթում հաղթող ճանաչվելու համար ստացել մրցանակ՝ արժանանալով ֆիզիկայի խնդրագրերի ու դասագրքերի հեղինակների դրվատանքին ու զովեստին՝ որ արցախյան մանկավարժն այդքան իմացական բարձր մակարդակ ու անսպառ պաշար ունի ամբարած և համբերություն մի ծովածավալ՝ կրթելու մատաղ սերունդին, իր անձնական օրինակով դաստիարակելու ըրանց, ասել է թե՛ կերտելու մեր նորանկախ պետության մուր հիմքերը, ապահովելու ազգային երթը մեր դարավոր:

Հպարտությունը մշտավար ջախի պես հորդում է մեր սրտերում, քանզի այսօր էլ նա առաջին գծում է, ամենաթեժ գծում, ուր ամեն օր, ամեն ժամ կռիվ է տալիս 21-րդ դարի արցախյան մտավոր և հոգևոր արժեքների ձևավորման համար: Նա ամեն օր, ամեն ժամ կռում ու կռվում է հայրենիքի ապագա զինվորների միտքն ու կամքը:

Աշոտ Ապրեսյանի սաներն օլիմպիադաներում արժանացել են մրցանակային տեղերի, իսկ ուսուցչի աջքերում թևածել է համեստ ու պարզ թաքուն մի փայլ, որն այնքան կարճ է տևում, որ հաճախ չեն էլ հասցնում նկատել: Հաջողությունները գունագեղ ուլունքաշարի անգին սուտակների պես գունարվում ու զարդարում են նրա անցած քայլերը՝ անբաժան խթանը դառնալով նրա մանկավարժահոգեբանական գործունեության:

Սրտացավ ու բարեսիրտ, ներողամիտ ու անհիշաչար, առիքնող ու զուսպ՝ ահա այն հատկանիշները, որոնք բնութագրում են նրան: Մի նուրբ քնքշություն ու ակամակիտ մաքրություն հոգու մեջ ունի սաների համար, իսկ սաները՝ հպարտ ու վեհ, որ աշակերտել են Ա. Ապրեսյանին:

Ընկերասեր ու ճշմարտախոս մի մանկավարժ, որի ինքնամոլորումը հայրենի եզերքին ու ընտրած մասնագիտությանը՝ մանկավարժությանը, չափման եզրեր ու համեմատության աստիճաններ չունի. այն տիեզերական է, անհուն:

Հարգարժան Աշոտ Եղիշի Ապրեսյան, շնորհավոր հորեյանդ, եռատոնը 20-ամյա: ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հայտնի դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրինության և մանկավարժական կոլեկտիվի անունից մաղթում ենք Ձեզ աշխատանքային նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ, բազում խելացի սաներ ու կապույտ երկնակամար:

ԵՊՀ-ին առընթեր՝ Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հայտնի դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի մանկավարժական կոլեկտիվ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ, ԱՐԴԱՐԵՎ, ՈՒՐԱՆԱՑՆՈՂ ԵՆ

Մայիսյան եռատոնի ծրագրի շրջանակներում ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը, համագործակցելով Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի և ՊԲ հրամանատարության հետ, արդեն չորրորդ տարին անց է կացնում շարադրությունների մրցույթ՝ 8-12-րդ դասարաններում՝ «Անունդ՝ հայտնի, ճակատագիրդ՝ անհայտ», «Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի», «Ես սիրում եմ թեզ, Արցախ» թեմաներով: Արդյունքների ամփոփումը տեղի ունեցավ ԼՂՀ ԱԿԱՅՄ թանգարանում:

Բացման խոսքում ԼՂՀ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանի տնօրեն Վերա Գրիգորյանն ասաց, որ մրցույթների անցկացումը մեծապես նպաստում է սովորողներին հայրենասիրական ոգով դաստիարակելու, արժանի հերթափոխ պատրաստելու, մեր հող ու ջրի համար նահատակված, մարտի դաշտում անհայտ կորած տղաների պայծառ հիշատակը հավերժացնելու մեծ ու պատվաբեր գործի արդյունավետության բարձրացմանը:

Կրթության բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանը, խրախուսական պարզևներ հանձնելով 1-3-րդ տեղերը գրաված 28 աշակերտներին, ասաց, որ արդյունքները ոչ միայն գոհացուցիչ են, այլև հիանալի: Մասնակիցներից ամեն մեկն իր սերը հայրենիքի հանդեպ արտահայտել է յուրովի: Ուրախալից այն է, որ գրավորներից ոչ մե-

կը մնան չէ մյուսին: Ու սա միանգամայն բնական է: 21-րդ դարի պատկերացմամբ, հայրենիքը սկիզբ է առնում իրենց բակից ու պարտեզից, իրենց հանդ ու դաշտից, սառնորակ աղբյուրից, բուրավետ ծաղիկների, վարդերի թփից, մեկ ուրիշը հայրենիք ասելիս ակամայից մեծն պոետի «Ես իմ անուշ Հայաստանի...» տողն է շշմջում ու նաև՝ այդ անուշ Հայաստանի ու հարազատ լեռնաշխարհի՝ Ղարաբաղի համար նահատակված հոր կամ պապերի պատկերն է հիշում ու նզովում պատերազմը, որ բերում է մահ ու ավեր, կործանում, խեղում ճակատագրեր, ոչնչացնում արժեքներ, զեղեցկություններ:

Ամենակարևորը. այսօրվա մեր սաները խորապես գիտակցում են, որ հայրենիքը բառ չէ սոսկ ու ոչ էլ՝ աշխարհագրական տարածք: Նրանք գիտեն, որ հայրենիքը մեր պատմությունն է, մեր անցյալն ու ներկան: Հայրենիքը մոր գրկում թռչող ու հավքի նման ծվվող այն մանկիկն է, որ վաղը պիտի մեքոնայան այրուբեն սերտի, մյուս օրը շենքեր, շինություններ կերտի: Հայրենիքը Քիրսն է մեր ու մեր Մռուվը, մեր լեզուն, դպրությունը, մեզ սնողն ու պահողը, մեր աներեր զինվորը, հայոց հողը, հայոց բանակը, որով, իրավամբ, պարծենում ենք մենք: Թերևս այստեղ շահավետ է մեջբերել մեր խոսքի անզուգական Վարպետի՝ Ավետիք Իսահակյանի խորհմաստ տողերը. «Սուրբ է հայրենիքը: Նա մեր հացն է, մայրական գիրկը, մեր մանկությունն է, մեր պապերի գերեզմանն է և մեր

մանուկների զվարթ օրորոցը: Նա մեր տարեգիրքն է և մեր հին ու նոր քնարը: Նա հայրական տան ծուխն է, որ մեր հրձվանքն ու վիշտը տանում է աստղերին: Նվիրական է նա, որովհետև մեզ գրկող բազուկներն ու սիրող սրտերը հող են դարձել այնտեղ: Հայրենիքը լեզուն է, նա է միացնում անցյալը, ներկան ու ապագան, մեռածն ու ապրողը, նա է հավերժացնում ազգը, շտեմարանում ազգի հոգևոր գանձերը»:

Շնորհավորելով պարզևտրվածներին՝ կրթության և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գրետա Գրիգորյանը ասաց, որ երևույթն ինքնին ուրախացնող է, բայց նաև՝ պարտավորեցնող: Այն հուշում է ավելի լավ սովորել, սիրել հայոց գիրն ու դպրությունը, բարձր պահել հարազատ կրթօջախի հարգն ու պատիվը ու, որ կարևոր է՝ շարունակել և հետևողականորեն կյանքի կոչել ահեղ մարտերում նահատակված կամ չարաբաստիկ մի պահի վայրագ թուրքի ձեռքն ընկած անհայտ կորած մեր արծիվ տղաների երազներն ու հույսերը: Իսկ դա կարող են անել միայն ու միայն բարձր նիշերով, հայրենամուտ արարներով ու օրինակելի վարքով, հարազատ օջախի, հայրենի եզերքի հանդեպ ունեցած անսահման սիրով ու նվիրումով:

Միքայել ԲԱՆՍՆ Թոշակառու ուսուցիչ



ԷՍՍԵ

# ՇՈՒՇԻ, ԱՅՍՏԵՂ ԸՆԴՈՒՄՆԱԿՆԵՐՆ ՕԵՎՈՒՄ ԵՆ ԽՆԿԱՐԿԱՆ ԲՈՒՅՐՈՎ

Եկե՛ք Շուշի: Այցելե՛ք հերոս քաղաք: Մեծ մղուն կառաջանա՛ մտնելու Ղազանչեցոց տաճար՝ Ամենափրկիչ ու զորավոր, հրաշագեղ ու վեհաշուք, մեկն այն գույզ սրբօջախներից՝ Մայրատաճար ու Հովհաննես Մկրտիչ, որոնք են մնացել լիուլի յոթ փոխարեն: Եվ կան ու զործում են: Եվ հնչում է պատարագի երգը, որ զորության շրջագիծ է ծավալում, չէ՞ որ հաղթանակի օրրանը նախառաջ մշակույթի կրողն է, և տեսնել է պետք, զգալ է պետք ու շրջափել, թե ի՞նչ շուք է ստանում տոն օրերին Շուշին, մանավանդ Սուրբ Ծննդի և Հարության հրաշափառ օրերին: Տեսնե՛լ է պետք, հրճվե՛լ է պետք, ապրե՛լ է պետք այդ օրերի ամեն մի բջիջով, որ զորացնելու կարողություն ունի: Իսկ սովորական օրերին ստանում է հանդարտիկ անդորություն, որ կարող էս անգամ աստվածային շշուկները լսել:

Այսպես «Էլով, գյուղով» Շուշին մեկտեղ աղոթելու ու ողջախոսվելու զորության է կանչում: Ու միասին մի ժողովարանում են մեկտեղվում երկրի նախագահ ու զորավար, նախարար ու խորհրդական, ուսուցանող ու դպրական, շինարար ու բազմամարդ աղոթական: Այստեղ մեկտեղվում է հայի միտքը և համունում առ Աստված՝ ի բարօրություն հայոց կենսակաճաց...

Այսպես 20 տարի շարունակ, որ լցնում է բոլորին սրբության նշխարներով ու օրհնություններով: Այս ամենի պակաս կազմում է Հաղթանակի տոնը՝ հայոց բերդաքաղաքի պանծալի ազատագրության օր Մայիսի 9-ը, երբ հաղթության ողջույնը շիթվում է ամեն մի անկյունից, բերդապարիսպների պռուկներին...

Այսպես է 20 ավետաբեր արարման տարի, որ մեր կենսակերպի խորհուրդն ունի: Եվ սա Շուշին է՝ հին ու նոր, ավեր ու վերակերտվող: Քարը քարին դնող ամեն մի վարպետ պատմական ակնարկներ է քաղում: Եվ շենքերի վերանորոգման ընթացքում քարերն ասես սրբազրվում են և տեղադրվում իրենց տեղը, հենց իրենց տեղը, որ չխախտվի նրա պատմական ոչ մի ճիշտ, ոչ մի կետ:

Ու պատմության քարե վկաններ պատմությունը սկսում են այնտեղից, երբ հաղթական մային ազատություն բերեց քաղաքին, բաղձալի ազատություն.

- Մայիսի 9-ը ցնծություն է մեզ համար: Հայ զինվորները հաղթական ոգով մտան քաղաք, որը տնավարի ընդունեց իր զավակներին: Մենք եմք դրա ականատեսը: Ձիմվորների շուրջպարը հենց այդտեղից՝ Ղազանչեցոցի մուտքից սկսվեց, ու ծավալվեց խնդրությունը: Սրբազանի օրհնությունը խանդավառեց զինվորներին, տարավ շրջափակված Արցախի ազատագրություն:

Քարերը շարունակում են վկայել.

- Դժվարն ու հեշտը իրար հետ այստեղ են ճանփա բռնել: Եվ մեկտեղ են հերոսացել: Քաղաքն ու ժողովուրդը նույն ճակատագրով են ապրել՝ հերոսանալու խիզախությամբ: Ու պետք էր տեսնել, թե ինչ մաքառումների ճանապարհ անցավ քաղաքը. բզկտված օրերից անգամ հույս հավաքեց, լույս ժողովեց ու սկսեց արարել: Սառցապատ ձմեռները իրե շնչով

մեղմացան: Ապրելու, արարելու ուժը հեք պարզեց ժողովրդին ու ձուլեց նոր քաղաք՝ որպես ապագա սերունդների վկայության գիճանչան...

Գոյության ակունքներին դնելով կամքի շաղախներ՝ քաղաքը հարության դռներ բացեց՝ մեկտեղ, ժողովրդով, լավ բարեկամներով, հոգևոր նշխարներով, որ հաց դարձավ ու հավեց յուրաքանչյուրի բերանում:

Այսպես ուժ առավ՝ կայանալու: Ջրի պես հորդում էր կամքը, հետո կենսական ջուրն էլ ավելացավ մարդկանց կյանքին: Ջերմություն հունցելով հացի հետ՝ ունեցավ կենարար հաց:

Հետո սկսեց գազաֆիկացվել քաղաքը, ու ջերմությունն ավելացավ: Հետո լույսը շատացավ, որովհետև Աստուծո օրհնած լույսին ավելացավ էլեկտրականը, և եղև լույս ավելի հորդաբուխ: Ու փողոցներում ծորացող կյանքը հորդաց...

Ուխտագնաց մարդիկ ավելի շատ եկան ու եկան և գալիս են, հար գալիս՝ մեկտեղ ավելի շատ ճրագներ վառելու ու ավելի շատ լույս

որ փոխանցվում է մեկը մյուսին: Սա շուշեցու գոյատևությունն է, որի հենքը հենց այստեղ ապրելու մենաշնորհն է՝ կենսակերպի յուրօրինակությամբ հանդերձ:

Շուշին շռայլ է իր ներուժով, իր հոգեմտավոր ներուժով: Քաղաքի սակավաթիվ բնակչությունը, դիմակայելով բնակլիմայական և սոցիալական հոգսերին, չի կորցնում հոգու առույգությունը, կրթում է իրեն հատուկ ձևով, իր էությանը համահունչ ոճով:

Կրթվում է քաղաքը և ստեղծում նոր պոտենցիալ՝ մտավորը, որ երկու տասնամյակ ժողովրդին զինող ուժն է եղել ու մնում է այդպիսին:

Ինչքան վեհ է խոսել այս մասին, մտավոր ներուժի մասին: Մշտապես անվանի մարդկանցով հարուստ քաղաքը պահում է ավանդները և այսօր էլ ունի իր մտավոր էլիտան, որ քաղաքի գաղափարական ուղղվածության կազմավորողն է: Հենց սրա վկան են կրթօջախները, որոնք միշտ էլ լավ թողարկումներ են ունենում, որոնցով և մշտապես համալրվում է այն, ինչ

Այսպես է ընթանում Շուշիի կյանքը՝ հոգևորով, մտավորով, դարավորով միախառնված, միևնույն ժամանակ՝ ռիթմիկ և երաժշտական: Մանավանդ, երբ մանուկները խլրտում են փողոցներում ու երգում: Ի՞նչ են երգում: Ի՞նչ ունեն երգելու՝ դասական երգացանկ: Եվ Շուշին չի կարելի երգերով զարմացնել. քաղաքի կեսն ընդգրկված է հոգևոր, մյուս կեսը՝ դասական երգախմբերում:

Երևի Կարա Մուրազն կուզենար այսօրվա Շուշիում ապրել ու երգող քաղաքին ունկնդրել... Իսկ որտեղ կա երգ, կա հոգևոր մթնոլորտ, կան կրթական բարձրակարգ հաստատություններ, մշակութային հարուստ օջախներ. կյանքը դժվարություններից չի կարող ընկրկել: Լավատես ժողովուրդը լիախույս կերտում է ապագա Շուշին:

Եվ շենացող կյանքը կհանի փթթումի, բնակչությունը կստվարանա, կենսապայմաններն առավել կլինեն նպաստավոր, ու քաղաքի երբեմնի փառքը նորից կթնդա, որին ուղղված են բոլորի՝ թե՛ ներսի և թե՛ դրսի ուժերը:

Մշակութային օրրանի իր դերը Շուշին ստանձնել է բազմաթեք պարբերականների, խանդավառ թատերադրվեստի ավանդների շարունակման, կրթօջախների շենացող պտղաբեր դղանջումներով, քաղաքի դիմաքանդակի ամբողջացման նպատակայնությամբ:

Եվ ձեռքբերումներն ամբողջացնելով՝ մարդիկ իրենք են հայտնում լավատեսություն, որ վարակիչ է ու թափանցիկ: Շուշին իր կերտումների ուժով կամբողջանա որպես պատմական ու նորոգ քաղաք՝ լի իրեշտակների օրհնաբեր ներկայությամբ, որ խորհրդանշական կերտողությամբ հավաստում են քաղաքի ուղին 20 տարիների բարձունքից՝ անուշաբույր օծում բերելով պատարագի ելևէջների միջից, որ հար տարածվում է Ղազանչեցոցի գմբեթաբղ բարձունք ու ականջալուր անում կենդանի, որ սա է փառքի քաղաքի ճակատագիրը:

Ու ծիածանվում է տաճարի բարձունքն ամեն անգամ ու կամարվում յոթնամյա գույներով՝ մեր երկնակամարը դարձնելով օրհնյալ ու օձյալ: Եվ ժողովուրդը, տեսնելով դա, փառաբանում է երկնային զորությանը՝ այս հույսի քաղաքը, հավատքի ու հաղթանակի քաղաքը մաքրամաքուր մեզ վերադարձնելու համար ու խոստանում հավիտյան պահել որպես սրբազույն ավանդ՝ շենացնելու ու փառքի տիտղոսին հասցնելու... Իսկ մանուկները օրհնության ծիածան կամարվելիս խանդավառվում են ու գոչում.

- Փա՛ռք քեզ, Շուշի, հերոս քաղաք,
- Փա՛ռք քո բազկին, զինվոր ով հաղթ,
- Ու քաջության հունդից սնված,
- Ընծայեցիր փառքի վկան:
- Փա՛ռք քեզ, Շուշի, փառք քո հաղթանակը կռողներին, որ 20 տարի շարունակ և բյուր քսանամյակ քո գարունները պսակել ու պսակելու են մայիսի 9-ով՝ ծիածաններով կամարված...

**Վարդիթեր ՀԱԿՈՒՅԱՆ**



Քիսեցնելու...

Թերևս մեր քաղաքի կիրակիները սրանով են դառնում ուխտավարի կիրակիներ, որոնք բուրում են խնկայուղի պես՝ բխեցնելով օրհնություն:

- Մեր քաղաքի հոգևոր ոլորտը սուրբ ծեսերի անսահմանություն է, հավիտենությունների մշտնջենություն, որ դուռ է բացում խաղաղության ու օրհնության, այլապես դժվար կլինի մեր առօրյան,- շնչում են քարերը,- նյութականի տեղ չկա այստեղ, մարդիկ փառք են տալիս Աստուծոն իրենց սակավապետ կենցաղի համար: Փառաբանում են մի փոքրիկ ծածկի ու բավարար պետքերի համար:

Եվ Շուշին շքեղ չէ իր ճոխությամբ: Մարդիկ միանման են շատիվ. բանի ուժը ապրեցնում է,

կոչվում է ոսկե ֆոնդ ու մտավոր կենսունակության ապահովում:

Եվ ուղղակի շատ լավ է, որ Շուշիի կենտրոնական փողոցով անցնելիս (այդտեղ բնակչության հիմնամասն է) հանդիպում են մի լավ մտավորականի՝ լինի բազմավաստակ ուսուցիչ, լրագրող, թե մշակույթի աշխատող, խորհրդածու են հետը, լիցքավորվում ու շարունակում ճանապարհորդ: Հետո վերից վար կան վարից վեր մայթով անցնելիս կարող են հանդիպել, ուղղակի հանդիպել հոգևորականի (իսկ Պարզև Սրբազանին հանդիպել ավելի է լիցքավորում), ստանալ օրհնություն ու ոգևորված շարունակել ճանապարհորդ՝ արդեն արևն առած հոգևոր մեջ կան հոգևոր թե՛ծ արևը բաշխել մարդկանց ու չխատնել...

## ԲՐԵՅՆ-ՌԻՆԳ՝ ԱՄՅԻՍՅԱՆ ԸՆԴՈՒՄՆԱԿՆԵՐԻ ԹԵՄԱՅՈՎ

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության նախադրյալով և արտադրողական բաժնի նախաձեռնությամբ 9-11-րդ դասարանների սովորողների շրջանում անցկացվեց բրեյն-ռինգ խաղ-մրցույթ: Հանրապետական փուլին մասնակցած յոթ թիմերից յուրաքանչյուրը ներկայացնում էր մեկ շրջան:

Մասնակիցները շրջանային (քաղաքային) փուլի արդյունքներով հաղթած թիմերն էին: Ստեփանակերտը ներկայացնում էր ֆիզմաթ դպրոցի թիմը, Ասկերանի շրջանը՝ Նորագյուղի միջնակարգ դպրոցը, Մարտունու շրջանը՝ ճարտարի հ. 1 հոսքային ուսուցմամբ միջնակարգ դպրոցը, Մարտակերտի շրջանը՝ Առաջաձորի միջնակարգ դպրոցը, Հաղործի շրջանը՝ շրջկենտրոնի Մ. Սանվելյանի անվան հոսքային ուսուցմամբ միջնակարգ դպրոցը, Շուշիի շրջանը՝ Սուրբազանի անվան ավագ դպրոցը, Քաջաթաղը՝ Աղաձորի միջնակարգ դպրոցը:

Մրցույթը տեղի ունեցավ Ստեփանակերտի մշակույթի քաղաքային տան դահլիճում: Խաղը սկսվելուց առաջ հայրենասիրական երգերի խորհատ երաժշտության ներքո իրենց պարային համարներով մասնակիցներին ոգևորեցին մայրաքաղաքի հ. 1, 2, 3 պետական մանկապարտեզների սաները:

Խաղը բաղկացած էր երկու փուլից. առաջադրվեցին 15 և 10 հարցեր: Առաջին փուլից հետո, ան-

կախ հավաքած միավորներից, բոլոր թիմերն անցան երկրորդ փուլ: Առաջին փուլում հավաքած միավորներով (18,5) մրցակից թիմերից բավականաչափ առաջ անցավ Ստեփանակերտի թիմը, Մարտունու և Հաղործի թիմերը հավաքեցին հավասարաչափ միավորներ՝ 15,5, երրորդ տեղում էր Ասկերանի շրջանի թիմը՝ 13,5 միավոր: Երկրորդ փուլում առաջատարը Մարտակերտն էր, որին հետևում



էին Մարտունու և Ասկերանի թիմերը: Երկու փուլերի արդյունքներով 27 միավորով առաջին տեղը գրավեց Ստեփանակերտը ներկայացնող ֆիզմաթ դպրոցի «Մորիարտի» թիմը, 26,5 միավորով Մարտունու շրջանի ճարտարի հ. 1 դպրոցի «Պարմանի», երրորդ տեղը՝ 24,5 միավորով Մարտակերտի շրջանի Առաջաձորի միջնակարգ դպրոցի «Առաջաձոր» թիմը:

Պետք է ասել, որ թիմերը շատ ակտիվ էին: Դա նկատելի էր ոչ միայն հարցերը կուլեկտիվ ընմարկելիս, այլև հրապարակված ճիշտ պատասխանների առնչությամբ իրենց ամհամաձայնությունը հայտնելով:

Բոլոր թիմերը պարզատրվեցին ԼՂՀ կրթության և գիտության պատվոգրով, 1-3-րդ տեղեր գրաված թիմերը՝ նաև դրամական պարգևով: Պարգևատրումները կատարեց նախարարության կրթության և գիտության վարչության պետ Ռայա Մուսայելյանը:

Ավելացնենք, որ միջոցառման մասնակիցներին իրենց կատարումներով դրական լիցքեր հաղորդեցին մշակույթի քաղաքային տան երիտասարդ երգիչներ Հայկ Դուլյանը, Փայանե Հարությունյանը և «Նոր սերունդ» պարային ստուդիայի սաները (ղեկավար Սյուզաննա Նասիբյան): Իսկ միջոցառման հայտնությունը այն վարող Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Ար-

սեն Խաչատրյանն էր, որը բոլորի վրա լավ տպավորություն թողեց խոսքի բարձր մշակույթով:

Սեփ. լրատվություն

ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ - 500

ԱՌԱՋԻՆ ԳՐԱՏԱՆ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ԲԱՅՈՒՄԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

ԳԻՏԱՊՐԱԿՏԻԿ ԿՈՆՖԵՐԱՆՍ՝ ՆԿԻՐՎԱԾ ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԿԻՆ

Հայ գրատպության 500-ամյակին էր նվիրված Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետական-տարածագրված համալսարանում ապրիլի 26-ին անցկացված գիտապրակտիկ կոնֆերանսը, որը բացեց համալսարանի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Վարդան Հակոբյանը: Հատկանշելով գրքի դերը մարդկային քաղաքակրթության մեջ՝ բանախոսը մասնավորեց հայ ձեռագիր և տպագիր գրքի նշանակությունը մեր ազգային-պատմության գործում և մեր ժողովրդի պաշտամունքի հասնող սերը գրքի հանդեպ: Բացման խոսքը համատեղելով «Հայ գրատպության սկզբնավորումը Շուշիում» զեկուցմանը, որով հանդես է եկել ապրիլի 22-ին Մատենադարանում անցկացված գիտաժողովին, Վ. Հակոբյանը ներկաներին ցույց տվեց հայ գրքի 500-ամյակի կապակցությամբ հրատարակված «Ուրբաթագրքի» օրինակը՝ որպես գրահրատարակչական բարձր որակի նմուշ, որն իրականացվել է այն նույն մատենագիտական սկզբունքներով, ինչ Հակոբ Մեղակարսի ժամանակ:

«Տպագրության գործի հիմնումն ու զարգացումը հայ իրականության մեջ» ծավալուն զեկուցումով հանդես եկավ համալսարանի դասախոս, դոցենտ, ԼՂՂ վաստակավոր մանկավարժ Ա. Պողոսյանը՝ մատնանշելով այն վիթխարի աշխատանքը, որ տարբեր ժամանակաշրջաններում կատարվել է հայ գրքի տպագրության ու տարածման գործում: ԱրՊԳ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Խանյանի խոսքը հայի արարող ոգու՝ տառից մինչև գիրք, գրքից մինչև պետություն, հավերժման գաղտնիքի մասին էր: Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, համալսարանի դասախոս Գ. Հարությունյանը հանդես եկավ «Արցախում տպագրության գործի զարգացման միտումները 1827-1830թթ.» թեմայով: Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, դոցենտ Ժ. Բեգլարյանը, հանդես գալով «Միթթարյան միաբանությունների դերը հայ գրատպության զարգացման գործում» թեմայով, ի ցույց հանեց այն հսկայական գործունեությունը, որ ծավալել է այսօր էլ շարունակում են Վեներտիկի և Վիեննայի Միթթարյանները եկեղեցական, գիտական, զեղավերստական, տոմարագիտական գրքերի, հայ մամուլի և դասագրքերի հրատարակման, պահպանման ու քարոզման գործում: «Հայ տպագրության քաղաքականության 500-ամյակը» թեմայով հանդես եկավ համալսարանի լրագրության ամբիոնի վարիչ, դասախոս Ա. Բաղդասարյանը, իսկ համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, դասախոս Զ. Վարունը իր «Հայոց ցեղասպանության արտացոլումը տպագրական-տեղեկատվական աղբյուրներում» զեկուցումով ներկայացրեց 20-րդ դարասկզբից առայսօր ակնատեսների վկայություններով վերհանված տեղեկատվությունը Հայոց ցեղասպանության մասին:

Հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Ս. Գասպարյանը խոսեց ռուսահայ համայնքում հայ գրքի տպագրության հիմնման ու զարգացման մասին: Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ա. Գրիգորյանը հանդես եկավ «Տպագրության գործի զարգացումը Արցախում 1992-2012 թթ.» զեկուցումով:

Համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ, ՏԿՄՄ բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Է. Մկրտչյանը խոսեց գրքի վրա ինքնուրույն աշխատանքի ձևերի մասին: Գիտապրակտիկ կոնֆերանսն իր աշխատանքն ավարտեց տեղերից բարձրացված հարցերի լուսաբանմամբ, փոխադարձ ըմբռնողականության մթնոլորտում:

Սեփ. լրագրություն

Վերջապես Ստեփանակերտն ունեցավ իր գրատունը, որը գրասերների և մտավորականների երազանքն էր: Երևանի «Էդիտ Պրինտ» հրատարակչությունը, որն անցյալ տարի հանրապետության մայրաքաղաքում կազմակերպել էր գրքերի ցուցահանդես-վաճառք, հուշագիր է ստորագրել ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հետ, և ահա, մայիսի առաջին օրերին գրասերները և մտավորականները «Մեզա» առևտրի կենտրոնի երրորդ հարկում մասնակցեցին Հայաստանում և Արցախում առաջին գրատան բացմանը:

Գրատան բացումը որպես երևույթ՝ կարևորեց ԼՂՀ գրողների միության նախագահ, բանաստեղծ Վարդան Հակոբյանը՝ բացման խոսքում նշելով, որ ազգի դեմքը մշակույթն է, իսկ գիրքը՝ դիմագիծը բնորոշող տարր: Շատ հինգ է հայը գրի պաշտամունք ունեցել, և շատ ազգեր չէ, որ կարող են նշել գրատպության 500-ամյակ: Բանախոսը կանգ առավ նաև մշակութային հիմնավոր քաղաք Շուշիում 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին զարգացած գրատպության, ինչպես և մեր նորանկախ պետության մեջ գրահրատարակչական գործի վրա:

«Երանելի Մաշտոցն Ամարասուն վառեց գիտության ջահը, որ արցախցին բարձր պահեց՝ գոյատևելով որպես հայ և 20-րդ դարավերջի հաղթանակով իր հողում ազատ ու անկախ ապրելու իրավունքը ձեռք բերեց,- ասաց ԼՂՀ ԿԳ նախարար Վլադիկ Խաչատրյանը: Գրատպության 500-ամյակ նշող ժողովուրդը գրատուն է բացում. սա մեծ խորհուրդ ունի»: Նախարարը նշեց, որ գրատունը հետագայում լիարժեք դերակատարություն կունենա հասարակության լայն շրջանում գրքի և գրականության քարոզման գործում: Այստեղ կանցկացվեն գրքի շնորհանդեսներ, քննարկումներ, հետաքրքիր հանդիպումներ: Վ. Խաչատրյանը հավաքվածներին տեղեկացրեց, որ գրատունը կդառնա նաև հայագիտական կենտրոն:

ԼՂՀ ԱԺ պատգամավոր, պատմաբան Արմեն Սարգսյանը գրատունը որակեց որպես հոգևոր արժեքների օջախ, որտեղ մտավորականը, գրասերը կզտնի իր որոնած գիրքը, իսկ սրահը կդառնա ստեփանակերտցիների սիրած վայրը:

Գրատան բացման առթիվ նախաձեռնողներին շնորհակալություն հայտնեց հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Մանուշ Բալայանը, ով տասնյակ տարիներ քարոզել է գիրքը, իր սաների մեջ սեր ներարկել դեպի գրականությունը:

Եվ պատահական չէր գրադարակների շքեղ, գրավիչ ու ձգող գրքերի շուրջ հաճելի իրարանցումը, որ ստեղծեցին միջոցառմանը ներկա ուսուցիչները: Մեծ էր հավաքվածների գիրք գնելու ձգտումը և ցանկությունը:

Հայաստանի հրատարակչների միության նախագահ, «Էդիտ Պրինտ» գրահրատարակչության հիմնադիր և ղեկավար Մկրտիչ Կարապետյանը ներկաներին շնորհավորելով, ասաց, որ գրատանը ներկայացվել է հազարից ավելի կտոր գիրք, որից՝ 500-ը՝ «Էդիտ Պրինտի» հրատարակածներից, որ գրքերի գները նույնն են, ինչ՝ Երևանում, և որ հետագայում գների իջեցում կլինի:

Այնուհետև Ս. Կարապետյանը հայերեն հրատարակված առաջին գրքի՝ «Ուրբաթագրքի» լուսապատճենապատկերը նվիրեց Արցախի պետական համալսարանին, մի շարք պետական մարմինների:

Գրատան բացման ժապավենը կտրեցին ԼՂՀ ԿԳ նախարար Վ. Խաչատրյանը, ԳՄ նախագահ Վ. Հակոբյանը, Հայաստանի հրատարակչների միության նախագահ,

տարակված: Վերականգնվում է գրեթե այն նույն համակարգը, որ կար խորհրդային տարիներին Հայաստանում կամ Ռուսաստանում, այսինքն՝ կենտրոնացված գրքերը հետո բաժանվելու են:

Գրատունը կունենա պահուստային ֆոնդ, որ ենթակա չի լինի վաճառքի:

Այն գրքերը, որ կլինեն 1-2 օրինակից, բնականաբար, չեն վաճառվի, պարզապես կցուցադրվեն: Մենք կաշխատենք ցուցադրություններ կազմակերպել, ասենք, հանրային գրադարանի, Մատենադարանի հետ համատեղ: Սա հայերենագիտական կենտրոն կդառնա, մշակութային կենտրոն՝ Հայաստանի, Արցախի գրողների միությունների հետ համագործակցությամբ: Բնական է, գրատանը գիրքը վաճառվելու է, բայց գործունեության այլ տեսակներ էլ է ներառելու: Շուտով էլ կկտրոնային գրքեր էլ կուղարկենք գրատուն, մասնավոր, որ նոր սերունդը նախընտրում է գրքի այդ տեսակը: Դրանք նաև կվաճառվեն: Մուլտիպլիկացիոն ֆիլմեր էլ ենք ստեղծում, հատկապես թույնամյանի հեքիաթների տեքստերով: Ծրագրեր շատ ունենք, գործը նոր-նոր սկսվում է:

Մենք ունենք հեղինակներ, որոնց հետ աշխատում ենք: Այդպիսի գրքեր այստեղ կան ցուցադրված: Յուրի Սահակյան, Երվանդ Պետրոսյան, Էդուարդ Միլիտոնյան... Այս և նման հեղինակների հետ պայմանագիր ենք կնքում, հոնորար վճարում և գիրքը տպագրում: Դա աշխարհում ընդունված ձև է, իսկ մեզ մոտ խորհրդային տարիներից հետո մոռացված... Մենք արդեն աշխատում ենք այդ ձևով: Այսինքն,

«Էդիտ Պրինտ» հրատարակչության հիմնադիր Ս. Կարապետյանը:

Մկրտիչ Կարապետյանի հետ մեր զրույցը «Էդիտ Պրինտ» հրատարակչության գործունեության, հեղինակ-հրատարակչություն-տպարան կապի, գիրքն ընթերցողին մոտեցնելու ձևերի մասին էր:

- Գրատուն ունենալու գաղափարը սկս



վեց նրանից, որ լինում էինք Հայաստանի մարզերում, կազմակերպում գրքի ցուցահանդես-վաճառքներ, տեսնում մարդկանց հետաքրքրությունը գրքի հանդեպ: Ես համաձայն չեմ այն տեսակետին, թե ընթերցողը հեռացել է գրքից: Պարզապես պետք է գիրքը մոտեցնել ժողովրդին: Սա տարիների մեր երազանքն էր, որ իրականություն դարձավ հիմա և առաջինը՝ Ստեփանակերտում: Ծրագիրը կշարունակվի. գրատներ կբացենք Գյումրիում, Կապանում, Վանաձորում: Այս տարի՝ այս երեքը: «Էդիտ Պրինտից» բացի, այլ հրատարակչություններ էլ են ցուցադրվել այստեղ: Տարբեր հրատարակչությունների արտադրանք են, նաև այլ երկրներից՝ ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով: Երկու ամիս հետո այս սրահում կներկայացնենք 2000 անուն գիրք: Հիմնականում աշխատում ենք ընթերցողին ներկայացնել նոր գրքեր: Ամիսը 1-2 անգամ պարբերականությամբ նոր գրքեր են ուղարկվելու, ընդ որում՝ Հայաստանում և արտերկրում հրա-

հրատարակչությունը գրողին ներկայացնում է ժողովրդին: Ինչքան շատ գիրք վաճառվի, և՛ գրողը կշահի, և՛ հրատարակիչը: Մասնագիտական և մեթոդական գրականության էլ ենք ուշադրություն դարձնում: Դարձյալ հոնորար էլ վճարվում:

Ասեմ, որ ամենաշատը վաճառվում է մանկական գրականություն: Դե, երեխաների համար ծնողները չեն զլանում, վճարում են: Ամենաշատ վաճառվող հեղինակը թույնամյանն է, որից «Էդիտ Պրինտը» վերջին երկու տարում 30 անուն գիրք է հրատարակել: Առաջին անգամ մեր պատվերով թարգմանվել և ռուսերեն հրատարակվել են թույնամյանի հեքիաթները: Սրահում ցուցադրված են: Մենք նաև արտասահմանում հրատարակված գրքերի լիցենզիաները գնում ենք, թարգմանել տալիս ու վաճառում: Սա շարունակական և կատարելագործվող գործընթաց է:

Նվարդ ՍՈՂՈՍՅԱՆ





ԿԱՐԳ

Գրանցված է  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
արդարադատության նախարարության կողմից  
2012 թվականի մայիսի « 4 »-ին  
Պետական գրանցման համարը՝ 1051266  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
արդարադատության նախարար՝  
Ն. Նարինյան

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 4 » մայիսի 2012թ.

N 74-Ն ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ՝ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՋՄԱՆ, ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՍ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՆՃԿԱՋՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 80-Ն ՀՐԱՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետին համապատասխան՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման և ավարտման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի մայիսի 4-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հան-

րակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման և ավարտման կարգը հաստատելու մասին» N 80-Ն հրամանը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ս. Ասրյանին:

**ՆԱԽԱՐԱՐ՝ Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կրթության և գիտության նախարարի  
2012 թվականի մայիսի 4-ի

N 74-Ն հրամանի

**ԿԱՐԳ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ՝ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՋՄԱՆ, ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՍ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՆՃԿԱՋՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ հաստատություն) սովորողների (այսուհետ՝ սովորողի) փոխադրման և ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման կազմակերպման, ինչպես նաև մեղալի հավակնորդ շրջանավարտին մեղալով պարզատրման և ուսումնական տարվա ընթացքում 180 ժամ և ավելի բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման գործընթացի կազմակերպման հետ կապված իրավահարաբերությունները:

**II. ՍՈՎՈՐՈՂԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԴԱՍԱՐԱՆԻՑ ԴԱՍԱՐԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏԵԼԸ**

2. 1-ին դասարանում սովորողը, որպես կանոն, փոխադրվում է հաջորդ դասարան՝ գիտելիքների անհրաժեշտ նվազագույնի յուրացման պայմանով: Առանձին դեպքերում սովորողը կարող է կրկնել տվյալ ուսումնական տարվա դասընթացը՝

1) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր դիմումի և հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ:

2) դասավարի հիմնավորված առաջարկու-

թյան հիման վրա՝ հաստատության և ծնողի գրավոր համաձայնությամբ:

3. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան:

4. 4-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 1-ին աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան և գիտելիքների ստուգումից 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան:

5. 9-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 2-րդ աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան 4-10 միավոր և ավարտական քննություններից 8-20 միավոր գնահատված սովորողը ստանում է հիմնական կրթության վկայական:

6. 12-րդ դասարանում (հաստատության հանրակրթական հիմնական ծրագրերի 3-րդ աստիճանի ավարտական դասարան) ուսումնական բոլոր առարկաներից տարեկան՝ 4-10 և պետական ավարտական քննություններից՝ 8-20 միավոր գնահատված շրջանավարտը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ:

7. Հաստատությունում որևէ առարկա չդասավանդվելու պատճառով տվյալ առարկայից գնահատական չունեցող շրջանավարտն իր

ցանկությամբ այդ առարկայից կարող է քննություն հանձնել էքստեռն կարգով: Այդ քննության արդյունքը հիմք է հանդիսանում միջնակարգ կրթության ատեստատում տարեկան, իսկ քննական առարկայի դեպքում՝ քննական և տարեկան գնահատականներ նշանակելու համար:

8. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում մինչև երկու առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողի փոխադրման կամ ավարտման հարցը որոշվում է օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում նրա հանձնած վերաքննությունների կամ առաջադրանքների արդյունքներով: Բոլոր տիպի առաջադրանքները մշակվում են հաստատության համապատասխան մեթոդիավորման կողմից:

9. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ և 10-րդ դասարաններում վերաքննության արդյունքում մեկ կամ երկու առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

1) կրկնում է դասընթացը կամ:

2) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի 1-3 միավոր գնահատված առարկայից մեկ առարկայի քննությունը, իսկ երկրորդը՝ մինչև 2-րդ կիսամյակի ավարտը: Վերաքննությունները չհանձնելու դեպքում

սովորողը կրկնում է վերը նշված պայմանով փոխադրված դասարանի դասընթացը՝ անկախ տվյալ դասարանում ստացած գնահատականներից:


10. 11-րդ դասարանում վերաքննության արդյունքում մեկ կամ երկու առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

1) կրկնում է դասընթացը կամ:

2) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի երկու՝ 1-3 միավոր գնահատված առարկաների վերաքննությունները:

Վերաքննությունները չհանձնելու դեպքում սովորողը կրկնում է վերը նշված պայմանով փոխադրված դասարանի դասընթացը՝ անկախ տվյալ դասարանում ստացած գնահատականներից:

11. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների սովորողները, ովքեր ուսումնական երեք և ավելի առարկաներից ունեն 1-3 միավոր տարեկան գնահատականներ, կրկնում են տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

12. 4-րդ դասարանի երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան և (կամ) գիտելիքների ստուգումից 1-3 միավոր գնահատված սովորողը կրկնում է 

ԿԱՐԳ

7 տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

13. 16 տարին չլրացած 9-րդ դասարանի սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե՝

1) երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր է գնահատվել:

2) ավարտական քննությունների ընթացքում 1-7 միավոր և տարեկան 1-3 միավոր գնահատականների ընդհանուր թիվը կազմում է երեք և ավելի:

3) վերաքննությունները հանձնելուց հետո թեկուզ մեկ առարկայից ստացել է 1-7 միավոր:

14. Սույն կարգի 9-րդ և 10-րդ կետերի 1-ին ենթակետերի և 11-13-րդ կետերի համաձայն՝ հանրակրթական ծրագիրը կրկնող սովորողի համար ուսուցում կազմակերպելու նպատակով հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագետների խումբ (այսուհետ՝ մասնագիտական խումբ):

Հիմք ընդունելով մասնագիտական խմբի կարծիքը և առաջարկությունները սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին՝ հաստատության տնօրենը հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական ուսուցման ծրագրեր և լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց:

15. Սովորողին ամառային առաջադրանք տալու կամ դասընթացը կրկնելու հաստատության մանկավարժական խորհրդի որոշման մասին սովորողի ծնողին տեղյակ է պահում դատելով՝ մանկավարժական խորհրդի նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր ծանուցմամբ:

16. 16 տարին լրացած մինչև 19 տարեկան 9-րդ դասարանի սովորողը ծնողի (որդեգրողների կամ հոգաբարձուի) դիմումի հիման վրա կարող է թողնել հաստատությունը, եթե՝

1) երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր է գնահատվել և չի թույլատրվել մասնակցել ավարտական քննություններին:

2) ավարտական քննությունների արդյունքում 1-7 միավոր և տարեկան 1-3 միավոր գնահատականների ընդհանուր թիվը կազմում է երեք և ավելի:

3) վերաքննությունների հանձնման արդյունքում թեկուզ մեկ առարկայից ստացել է 1-7 միավոր:

17. Մինչև 19 տարեկան 9-րդ դասարանի սովորողը, որի տարեկան 1-3 միավոր և (կամ) ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատականների ընդհանուր թիվը չի գերազանցում 2-ը, վերաքննությունները հանձնում է օգոստոսի 20-30-ը:

18. 19 տարին լրացած երեք և ավելի ուսումնական առարկաներից կամ վերաքննությունների հանձնման արդյունքում թեկուզ մեկ առարկայից տարեկան 1-3 և (կամ) քննական 1-7 միավոր գնահատականներ ունեցող 9-րդ և 12-րդ դասարանների սովորողը դուրս է մնում հաստատությունից:

19. Մինչև 19 տարեկան 12-րդ դասարանի այն սովորողը, որի տարեկան 1-3 միավոր և (կամ) ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատականների ընդհանուր թիվը չի գերազանցում երկուսը, վերաքննություն է հանձնում՝ «Հայոց լեզու», «Արևիկա», «Օտար լեզու», «Մաթեմատիկա», «Բնագիտություն» և «Հայոց պատմություն» առարկաներից հուլիսի 2-8-ն ընկած ժամանակահատվածում Ստեփանակերտ քաղաքի և շրջանների քննական կենտրոններում՝ Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնի քննական առաջադրանքներով, իսկ ուսումնական պլանով նախատեսված մյուս առարկայից(ներից)՝ իրենց հաստատությունում՝ հաստատության մեթոդիկական կողմից մշակված քննական առաջադրանքներով:

20. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանների այն սովորողները, ովքեր քննաշրջանի ավարտից հետո ունեն տարեկան 1-3 և (կամ) քննական 1-7 միավոր գնահատականներ, դուրս են մնում հաստատությունից:

1) պարտադիր գիմնորակային ծառայության զորակոչված սովորողները իրավունք ունեն քննություն(ներ) հանձնել և հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալ՝

ա. զորացրվելուց անմիջապես հետո նույն հաստատությունում, մինչև քննաշրջանի ավարտը:

բ. առնվազն մեկ տարի ծառայելուց հետո զորամասի հրամանատարության համաձայնությամբ՝ քննությունների համար սահմանված ժամկետներում, որևէ հաստատությունում:

2) մյուս սովորողներին իրավունք է վերապահվում միայն հաջորդ տարի նույն հաստատությունում հանձնել քննություններ այդ առարկաներից, իսկ նոր բնակավայր տեղափոխվելու դեպքում՝ այդ բնակավայրի հաստատություններից մեկում:

21. 9-րդ և 12-րդ դասարանների քննական առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատական ունեցող սովորողների վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում տարեկան և քննական գնահատական նշանակելու համար:

«Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն», «Հանրահաշիվ», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և «Երկրաչափություն» առարկաներից տարեկան գնահատականները նշանակվում են «Հայոց լեզու, գրականություն», «Հայոց լեզու, հայ գրականություն» և «Մաթեմատիկա» քննական առարկաների գնահատականների հիման վրա:

22. 12-րդ դասարանի այն սովորողը, ով որպես միասնական քննություն ընտրել է բնագիտական կամ օտար լեզուների առարկայախմբի առարկաներից երկուսը, «Ա» մակարդակից 8-20 միավոր գնահատական(ներ) ստանալու դեպքում, նրա ատեստատում լրացվում է սովորողի ընտրած գնահատականը: Երկու առարկայից վերաքննության դեպքում ատեստատում լրացվում է սովորողի ընտրած վերաքննության քննական գնահատականը:

23. Սույն կարգի 16-20-րդ կետերի պահանջներին համապատասխան քննություն չհանձնած սովորողներին հետագայում իրավունք է վերապահվում ընդհանուր հիմունքներով հանձնելու էքստեռն ավարտական քննություններ և ստանալ հաստատության ավարտական վկայական:

24. 2-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում տարեկան 9-10 միավոր գնահատականներ ունեցող սովորողը պարզապես չի կորցնում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գովասանագրով:

25. 9-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից տարեկան 9-10 և քննական 18-20 միավոր գնահատված սովորողը ստանում է «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական: Որևէ առարկայից (բացի առողջության պատճառով «Տեխնոլոգիա», «Ֆիզկուլտուրա», «Նախնական գիմնորակային պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկաներից ազատված լինելու դեպքերը) չգնահատված հիմնական դպրոցի շրջանավարտը «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական չի ստանում:

26. 12-րդ դասարանում տարեկան 9-10 միավոր գնահատականներ ունեցող շրջանավարտը հաստատության կողմից ներկայացվում է որպես գերազանցության մեդալի հավակնորդ՝ ըստ սույն կարգի 67-րդ և 68-րդ կետերի պահանջների:

27. Ուսումնական առարկաներից տարեկան գնահատականներ նշանակվում են դասավանդող ուսուցիչներն ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում՝ հաշվի առնելով սովորողի կիսամյակային գնահատականները:

28. «Տեխնոլոգիա», «Ֆիզկուլտուրա», «Նախնական գիմնորակային պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկաների պարապմունքներից առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը, ինչպես նաև չդասավանդելու պատճառով որևէ առարկայից տարեկան գնահատական չունենալը չի ազդում նրա՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ հաստատությունն ավարտելու վրա:

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ 180 ԺԱՍ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՑԱՎԱՅԱԾ ՍՈՎՈՐՈՂԻ՝ ՀԱՋՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ ԿԱՍ ՀԱՆՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՓՈՒՍՏՈՒՄԵԼԸ

29. Ուսումնական տարվա ընթացքում 180-240 ժամ դասերից բացակայած սովորողը հանձնում է քննություններ ուսումնական պլանով նախատեսված 5 առարկաներից՝ ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ:

30. 240 ժամից ավել բացակայելու և քննություններից որևէ առարկայից (10 միավորային համակարգում) 1-3 միավոր գնահատվելու դեպքում սովորողը, բացառությամբ 9-րդ դասարանի (16-19 տարեկան) և 12-րդ դասարանի (18-19 տարեկան), կրկնում է դասընթացը:

31. Ուսումնական տարվա ընթացքում 180-240 ժամ դասերից բացակայած 12-րդ դասարանի սովորողը քննություններ է հանձնում ուսումնական տարվա 1-ին կիսամյակում չգնահատված առարկաներից, իսկ 240 ժամից ավել բացակայելու դեպքում՝ դուրս է մնում դպրոցից:

32. 240 ժամից ավելի հարգելի պատճառով բացակայած սովորողներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ նախարար) կողմից բացառության կարգով կարող է թույլատրվել հանձնել քննություններ 5 առարկաներից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի աշխատակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) կրթության բաժինների (այսուհետ՝ կրթության բաժիններ) վարիչների պատճառաբանված ներկայացման հիման վրա:

33. Քննական առարկաների ցանկը քննարկվում և հաստատվում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստում, մինչև մայիսի 15-ը:

34. Քննություններն անց են կացվում մայիսի 16-ից մայիսի 25-ը ընկած ժամանակամիջոցում՝ գրավոր կամ բանավոր:

35. Քննական առաջադրանքները կազմում են առարկայական մեթոդիկական կողմից՝ հաստատում է ուսումնական հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն): Քննություններն

ընդունում են տվյալ առարկայի ուսուցիչը և տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը:

36. Քննությունների արդյունքների հիման վրա նշանակվում են սովորողի տարեկան գնահատականները: Ուսումնական պլանում նախատեսված մյուս առարկաների տարեկան գնահատականները նշանակվում են առկա գնահատականների հիման վրա: Եթե սովորողը որևէ առարկայից չունի ընթացիկ գնահատականներ, ապա նրա տարեկան գնահատականը այդ առարկայից որոշվում է լրացուցիչ քննության միջոցով՝ մանկավարժական խորհրդի կողմից սահմանված ժամանակացույցի և սույն կարգի համաձայն:

37. Սովորողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում և ամփոփվում է ուսումնական պարապմունքների ավարտից 15 օր առաջ:

IV. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՑՎԱՑՈՒՄԸ

38. 4-րդ դասարանում սովորողների գիտելիքների ստուգումը անց է կացվում «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից (գրավոր)՝ հաստատության տնօրենի սահմանած աշխատակարգով, նախարարության սահմանած միասնական օրերին՝ հունիսի 1-5-ն ընկած ժամանակահատվածում:

39. Ռուսերենով ուսուցմամբ դասարաններում գիտելիքների ստուգումը անց է կացվում նաև ռուսաց լեզվից (գրավոր)՝ հունիսի 5-10-ն ընկած ժամանակահատվածում: Քննություններն ընդունում են դասավանդող ուսուցիչները և տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը:

40. 4-րդ դասարանի համար հայոց լեզվի, մաթեմատիկայի (ռուսերենով ուսուցմամբ դասարաններում՝ ռուսաց լեզվի) գիտելիքների ստուգման առաջադրանքները (գնահատումը 10 միավորային համակարգով) կազմում են հաստատությունների մեթոդիկական կողմից՝ ըստ Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից հաստատված նմուշների:

41. 9-րդ դասարանում սահմանված են 6 ավարտական քննություններ՝

- 1) «Հայոց լեզու, գրականություն» (գրավոր).
- 2) «Մաթեմատիկա» (գրավոր).
- 3) «Հայոց պատմություն» (գրավոր).
- 4) «Օտար լեզու» (գրավոր), (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներ)՝ սովորողի ընտրությամբ.
- 5) «Բնագիտություն» (գրավոր), (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, Հայաստանի աշխարհագրություն)՝ սովորողի ընտրությամբ.
- 6) «Ֆիզկուլտուրա»:

42. Ռուսերենով ուսուցմամբ դասարաններում քննություններն անցկացվում են հետևյալ առարկաներից՝

- 1) «Հայոց լեզու, գրականություն» (գրավոր).
- 2) «Ռուսաց լեզու» (գրավոր).
- 3) «Մաթեմատիկա» (գրավոր).
- 4) «Հայոց պատմություն» (գրավոր).
- 5) «Օտար լեզու» (գրավոր), (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներ)՝ սովորողի ընտրությամբ.
- 6) «Բնագիտություն» (գրավոր), (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն)՝ սովորողի ընտրությամբ.
- 7) «Ֆիզկուլտուրա»:

43. 9-րդ դասարանի «Մաթեմատիկա», «Հայոց լեզու, գրականություն» առարկաներից գրավոր ավարտական քննությունները (գնահատումը՝ 20 միավորային համակարգով) կազմակերպվում են Նախարարության կողմից հաստատված քննական կենտրոնում՝ Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնի կազմած թեստերով (բացառությամբ «Ֆիզկուլտուրա» առարկայի): «Ֆիզկուլտուրա» առարկայի քննությունը կազմակերպվում է Նախարարության հաստատած նորմատիվների հիման վրա:

44. Քննական առաջադրանքների ծրարները թույլատրվում է բացել քննության օրը՝ քննասենյակում: Քննական աշխատանքը ստուգվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետ՝ գնահատման և թեստավորման կենտրոն) տնօրենի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության հաջորդ օրը ժամը 11:00-ին Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնի համակարգչային կայքում տեղադրված թեստերի ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահը ի պաշտոնե գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենն է: Ստուգող հանձնաժողովի անդամների 50 տոկոսը տվյալ առարկայի մասնագետներ են:

45. 9-րդ դասարանի «Հայոց պատմություն» գրավոր, «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) գրավոր, «Բնագիտություն» (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, Հայաստանի աշխարհագրություն) և «Ֆիզկուլտուրա» առարկաների ավարտական քննությունները կազմակերպվում են հաստատություններում՝ Հայաստանի Հանրա-



ԿԱՐԳ

պետության գնահատման և թեստավորման կենտրոնի կազմած թեստերով, գնահատումը՝ 20 միավորային համակարգով (բացառությամբ «Ֆիզկուլտուրա» առարկայի): Քննական աշխատանքը ստուգվում է քննական կենտրոնի ղեկավարի (տնօրենի) հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից քննության հաջորդ օրը ժամը 11:00-ին Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնի համակարգչային կայքում տեղադրված թեստերի ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահն է պաշտոնե կենտրոնի տնօրենն է: Ստուգող հանձնաժողովի անդամների 50 տոկոսը տվյալ առարկայի մասնագետներ են:

46. Ավարտական քննություններին սովորողներին չի թույլատրվում իրենց հետ քննասենյակ բերել կապի միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական և այլ ուղեցույց ձեռնարկներ:

47. Սահմանված ժամանակամիջոցում գրավոր աշխատանքը չավարտած սովորողներն այն հանձնում են անավարտ վիճակում:

48. «Օտար լեզու», «Բնագիտություն» և «Հայոց պատմություն» առարկաների ավարտական քննությունները կազմակերպելու համար տնօրենը նշանակում է քննության ընթացքի կազմակերպիչներ, որոնք չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:

49. 12-րդ դասարանում սահմանված են 6 պետական ավարտական քննություններ՝

- 1) «Հայոց լեզու և հայ գրականություն» (գրավոր).
- 2) «Մաթեմատիկա» (գրավոր).
- 3) «Հայոց պատմություն» (գրավոր).
- 4) «Օտար լեզու» (գրավոր), (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներ)՝ սովորողի ընտրությամբ.
- 5) «Բնագիտություն» (գրավոր), (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն)՝ սովորողի ընտրությամբ.
- 6) «Ֆիզկուլտուրա»:

50. Ռուսերենով ուսուցմամբ դասարաններում սահմանվում է ևս մեկ պետական ավարտական քննություն՝ «Ռուս գրականություն» (բանավոր), որն անցկացվում է հաստատության սահմանած օրը՝ հունիսի 1-20-ն ընկած ժամանակահատվածում (հաստատության մեթոդմիավորման կողմից մշակված հարցաշարի հիման վրա):

51. Բոլոր պետական ավարտական քննություններն անցկացվում են Նախարարության սահմանած միասնական օրենքին:

52. «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Օտար լեզու», «Բնագիտություն» և «Հայոց պատմություն» առարկաների պետական ավարտական քննությունները կազմակերպվում և անցկացվում են նախարարի կողմից հաստատված քննական կենտրոններում. քննությունների ընթացքը կազմակերպում են գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի կողմից նշանակված կազմակերպիչները, ովքեր չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:

53. 12-րդ դասարանի համար քննական առարկաների առաջադրանքները (գնահատումը 20 միավորային համակարգով՝ բացառությամբ ֆիզկուլտուրայի) կազմվում են Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից: Քննական առաջադրանքների ծրարները թույլատրվում է բացել քննության օրը՝ քննասենյակում:

54. «Ֆիզկուլտուրա» առարկայի ավարտական և պետական ավարտական քննություններն ընդունվում են հաստատության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից հետևյալ կազմով՝ հանձնաժողովի նախագահ, դասավանդող ուսուցիչ և հանձնաժողովի երկու անդամներ (անդամներից առնվազն մեկը՝ տվյալ առարկայի մասնագետ): «Ֆիզկուլտուրա» առարկայի քննությունը կազմակերպվում է Նախարարության հաստատած նորմատիվների հիման վրա:

55. Պետական ավարտական քննություններին սովորողին չի թույլատրվում իրենց հետ քննասենյակ բերել կապի միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական և այլ ուղեցույց ձեռնարկներ:

56. Սահմանված ժամանակամիջոցում գրավոր աշխատանքը չավարտած սովորողն այն հանձնում է անավարտ վիճակում:

57. 12-րդ դասարանում քննական աշխատանքները ստուգվում են գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի հրամանով ստեղծված քննական հանձնաժողովի կողմից, քննության հաջորդ օրը ժամը 11:00-ից, Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնի համակարգչային կայքում տեղադրված թեստերի ճիշտ պատասխանների հիման վրա: Քննական հանձնաժողովի նախագահն է պաշտոնե գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենն է:

58. Քննական հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ: Քննական գրավոր աշխատանքները մինչև դրանց ստուգման ավարտը պահվում են

գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի մոտ:  
59. Սովորողի բանավոր և ոչ կենտրոնացված համակարգով անցկացված քննության արդյունքները գնահատելիս, քննական հանձնաժողովի անդամների միջև տարածայնություն առաջանալու դեպքում, հարցը լուծվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում՝

1) 4-րդ դասարանում վճռորոշ է դասավանդող ուսուցչի առաջարկած գնահատականը.

2) 9-րդ և 12-րդ դասարաններում («Ֆիզկուլտուրա» և ռուսերենով ուսուցմամբ դասարաններում՝ «Ռուս գրականություն»)՝ հանձնաժողովի նախագահի առաջարկած գնահատականը:

Նշանակված գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամները (ներքև արձանագրության մեջ կարող է (են) կատարել հատուկ նշում:

60. 9-րդ և 12-րդ դասարանների այն սովորողները, ովքեր «Հանրահաշիվ», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և (կամ) «Երկրաչափություն» առարկաներից, ունեն տարեկան 1-3 միավոր գնահատական, չեն մասնակցում «Մաթեմատիկայի» ավարտական, 12-րդ դասարանում՝ պետական ավարտական քննություններին:

61. 12-րդ դասարանի սովորողը վերաքննություն է հանձնում «Մաթեմատիկա» առարկայից հուլիսի 2-8-ը, իսկ 9-րդ դասարանի սովորողը՝ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում: Վերաքննության արդյունքը հիմք է հանդիսանում հիմնական կրթության վկայականում՝ «Երկրաչափություն» ու «Հանրահաշիվ», միջնակարգ կրթության ատեստատում՝ «Երկրաչափություն» և «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաներից՝ տարեկան, «Մաթեմատիկա» առարկայից քննական գնահատական նշանակելու համար:

62. 9-րդ և 12-րդ դասարանների այն սովորողները, ովքեր «Հայոց լեզու» կամ «Գրականություն» («Հայ գրականություն») առարկաներից կամ երկուսից միաժամանակ ունեն տարեկան 1-3 միավոր գնահատականներ, չեն մասնակցում 9-րդ դասարանում «Հայոց լեզու, գրականություն» առարկայի ավարտական, 12-րդ դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն» պետական ավարտական քննություններին:

63. 12-րդ դասարանի սովորողը տվյալ առարկայից վերաքննություն է հանձնում հուլիսի 2-8-ը, իսկ 9-րդ դասարանի սովորողը՝ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում: Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաներից տարեկան և «Հայոց լեզու, գրականություն» առարկայից քննական և միջնակարգ կրթության ատեստատում՝ «Հայոց լեզու», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան և «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատականներ նշանակելու համար:

64. Եթե 9-րդ և 12-րդ դասարանի սովորողը «Հայոց լեզու» և «Գրականություն (հայ գրականություն)» առարկաներն ուսումնասիրել է միայն վերջին երկու ուսումնական տարիների ընթացքում, ապա հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում այդ առարկայի համապատասխան տողում գրվում է՝ «չի ուսումնասիրել»:

1) սովորողն իր ցանկությամբ կարող է ազատվել 9-րդ դասարանում՝ «Հայոց լեզու, գրականություն» առարկայի ավարտական և 12-րդ դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի պետական ավարտական քննություններից: Այդ դեպքում ավարտական փաստաթղթի համապատասխան տողում գրվում է՝ «ազատված է»:

2) սովորողն իր ցանկությամբ կարող է գնահատվել «Հայոց լեզու» և «Գրականություն (հայ գրականություն)» առարկաներից և հանձնել այդ առարկաներից համապատասխան քննությունները:

65. Հաստատությունների պետական ավարտական քննությունները կազմակերպելու և վերահսկելու նպատակով նախարարի հրամանով ստեղծվում է հանրապետական հանձնաժողով:

66. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողներն ազատվում են գիտելիքների ստուգումից (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններից, և նրանց տրվում է համապատասխանաբար հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ՝ առանց քննական գնահատականների:

V. ՈՒՍՄԱՆ ՄԵՋ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՌԱՋԱՊԻՍՈՒԹՅԱՆ ՀԱՍՍՈՐ ՄԵՂԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՑՈՒՄԸ

67. Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար մեղալի (այսուհետ՝ մեղալ) հավակնորդ ներկայացվում է այն շրջանավարտը, ով 9-րդ դասարան ավարտել է գերազանցությամբ (ստացել է գերազանցության վկայական), 10-12-րդ դասարաններում բոլոր առարկաներից ունի տարեկան 9 կամ 10

միավոր գնահատականներ:

68. Ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկայից (բացի առողջության պատճառով «Տեխնոլոգիա», «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկաներից ազատված լինելու դեպքերը) չգնահատված շրջանավարտը, անկախ չգնահատման պատճառներից, որպես մեղալի հավակնորդ չի ներկայացվում:

69. Մեղալի հավակնորդ շրջանավարտների նախնական ցուցակները մինչև ապրիլի 28-ը հաստատությունները ներկայացնում են կրթության բաժիններ: Նախարարության ենթակայության հաստատությունները նախնական ցուցակները մինչև ապրիլի 28-ը ներկայացնում են նախարարության կրթության և գիտության վարչություն:

1) մինչև մայիսի 3-ը համապատասխան կրթության բաժինները հաստատություններում ստուգում են ներկայացումների օրինականությունն ու հիմնավորվածությունը և ճշգրտված ցուցակները ներկայացնում Նախարարություն: Մայիս ամսվա ընթացքում, ըստ անհրաժեշտության, Նախարարությունը ուսումնասիրում է մեղալի հավակնորդների ներկայացման հավաստիությունը:

2) Նախարարությունը մինչև մայիսի 25-ը կրթության բաժիններ է ներկայացնում մեղալի հավակնորդների վերջնական ցուցակները, որոնցում ընդգրկվում են նաև Նախարարության ենթակայության հաստատությունների մեղալի հավակնորդ շրջանավարտները:

VI. ՄԵՂԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄԵՂԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

70. Մեղալի հավակնորդ բոլոր շրջանավարտները (անկախ հաստատության ենթակայությունից և հաստատությունում ուսուցման լեզվից) «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաների պետական ավարտական քննությունները հանձնում են կենտրոնացված կարգով:

1) մեղալի հավակնորդ այն շրջանավարտները, որոնց համար «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաները համարվում են բուհական ընդունելության մրցութային քննություն, քննություն են հանձնում միասնական համակարգով (պետական ավարտական քննության միավորները հաշվարկվում են «Ա» մակարդակի առաջադրանքների հիման վրա, իսկ ոչ մրցութային համարվելու դեպքում՝ կենտրոնացված համակարգով հանձնված պետական քննական առարկայի գնահատականը):

2) քննություններն անց են կացվում Ստեփանակերտ քաղաքում Նախարարության կողմից նախապես որոշված քննական կենտրոնում՝

ա. «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ հունիսի 6-ին.

բ. «Մաթեմատիկա» առարկայից՝ հունիսի 9-ին:

71. Մեղալի հավակնորդ շրջանավարտի, ինչպես և հաստատության մյուս շրջանավարտների համար քննական առաջադրանքները բովանդակությամբ ու կառուցվածքով նույնական են:

72. Մեղալի հավակնորդ շրջանավարտները «Հայոց պատմություն», «Բնագիտություն» և «Օտար լեզու» առարկաների պետական ավարտական քննությունները հանձնում են կենտրոնացված կարգով, տվյալ հաստատությունն ընդգրկող քննական կենտրոնում, իսկ «Ֆիզկուլտուրա» առարկայի քննությունը հանձնում են հաստատությունում:

73. Մինչև հունիսի 25-ը հաստատությունը կրթության բաժիններ է ներկայացնում սահմանված ձևի տեղեկանք մյուս չորս առարկաներից մեղալի հավակնորդ շրջանավարտի հանձնած պետական քննությունների արդյունքների մասին: Ստացված արդյունքներն ընդհանրացվում են կրթության բաժիններում և մինչև հունիսի 28-ը ներկայացվում Նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչություն: Նախարարության ենթակայության հաստատությունները սույն կետով նախատեսված տեղեկանքը նույն ժամկետում ներկայացնում են Նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչություն:

74. Մեղալի հավակնորդ այն շրջանավարտը, ով բոլոր ավարտական քննություններից ստացել է 18, 19, 20 միավոր (գնահատման 20 միավորային համակարգում) կամ 9, 10 միավոր (10 միավորային համակարգում), պարգևատրվում է մեղալով:

ԿԱՐԳ

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 5 » մայիսի 2012թ.

N 75-Ն ք. Ստեփանակերտ

2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ՓԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՅՎԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Լեննային Ղարաքաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել 2011-2012 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը և աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Լեննային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը ներկայացնել Լեննային Ղարաքաղի Հանրապետության շրջանների վարչակազմների և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժնիներին և հրապարակել «Լուսարար» թերթում:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեննային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ս. Ասրյանին:

Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հավելված  
Լեննային Ղարաքաղի Հանրապետության  
կրթության և գիտության նախարարի  
2012 թվականի մայիսի 5-ի  
N 75-Ն հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ՓԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՅՎԱՅՄԱՆ

1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում (անկախ դրանց կազմակերպման ձևից և ենթակայությունից), 2011-2012 ուսարվա ուսումնական պարապմունքներն ավարտվում են 2012 թվականի մայիսի 25-ին՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ 1-ին դասարանների, առնվազն 32 ուսումնական շաբաթ՝ 2-րդ դասարանների և առնվազն 34 ուսումնական շաբաթ՝ 3-12-րդ դասարանների համար:

2. Հունիսի 1-21-ը հանրակրթական ուսումնական հաստատությունների 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում անցկացվում են փոխարական (գիտելիքների ստուգում), ավարտական և պետական ավարտական քննություններ: Քննությունները սկսվում են առավոտյան ժամը 11:00-ին: Սովորողները հանրակրթական ուսումնական հաստատություն են ներկայանում ժամը 10-ին:

3. Մինչև մայիսի 22-ը հաստատության տնօրինությունը ուսուցիչներին, համապատասխան դասարանների սովորողներին և նրանց ծնողներին ժամկետային է «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման և ավարտման» կարգին և սույն աշխատակարգին:

4. Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդ սովորողները, անկախ ուսումնական հաստատության ենթակայությունից և անկախ հաստատությունում ուսուցման լեզվից, թույլատրվում են քննության՝ համաձայն Լեննային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացված վերջնական ցուցակի:

5. Դրսեկները (էքստերն կարգով ավարտողները) քննությունները հանձնում են Ստեփանակերտ քաղաքում՝ N 8 ավագ դպրոցում՝ կենտրոնացված կարգով:

6. Քննությունների միջև ընկած օրերին դասավանդող ուսուցիչները սովորողների համար կազմակերպում են կոնսուլտացիաներ քննական առարկաներից՝ հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով:

7. 4-րդ դասարանում գիտելիքների ստուգում անցկացվում է.

7.1. «Մայրենի» առարկայից՝ հունիսի 2-ին (թեստ):

1) Գիտելիքների ստուգման առաջադրանքները կազմում են դպրոցների մեթոդիավորումները՝ ըստ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետ՝ ԳԹԿ) կողմից մշակված մոդուլների հիման վրա (առնվազն 5 տարբերակ): (Առաջադրանքների նյութն ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված հետևյալ դասագրքերից. Դավիթ Գյուրջիյան, Նարինե Հեքեքյան, «Մայրենի»-4, «Էդիտ Պրինտ» հրատարակչու-

թյուն, Երևան, 2009թ., Վաչագան Սարգսյան, Կարինե Թորոսյան, «Մայրենի»- 4):

2) Դպրոցի տնօրենը հաստատում է առաջադրանքները և ծրարում: Ծրարներից մեկը բացվում է գիտելիքների ստուգման օրը, քննասենյակում՝ սովորողների ներկայությամբ:

3) Գրավոր աշխատանքի կատարման համար տրվում է 90 րոպե, գնահատումը՝ 10 միավորային համակարգով:

4) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 30 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

7.2. «Մաթեմատիկա» առարկայից՝ հունիսի 5-ին:

1) Գիտելիքների ստուգման առաջադրանքները կազմում են դպրոցների մեթոդիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված մոդուլների (առնվազն՝ 5 տարբերակ): (Առաջադրանքների նյութն ընտրվում է «Մաթեմատիկա»- 4, «Ձանգակ-97», 2009թ. «Մաթեմատիկա» հանրակրթական հիմնական դպրոցի ծրագիր և չափորոշիչ, 2007թ.):

2) Դպրոցի տնօրենը հաստատում է առաջադրանքները և ծրարում: Ծրարներից երկուսը բացվում են գիտելիքների ստուգման օրը, քննասենյակում՝ աշակերտների ներկայությամբ:

3) Գրավոր աշխատանքի կատարման համար տրվում է 90 րոպե, գնահատումը՝ 10 միավորային համակարգով:

4) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 30 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

8. Ռուսերենով ուսուցմամբ դասարաններում՝ ռուսաց լեզվից գրավոր (թեստ) հունիսի 5-10-ն ընկած ժամանակահատվածում: Քննություններն ընդունում են դասավանդող ուսուցիչները և տնօրենի կողմից մշակված գերազանցության ցուցակով:

1) Գիտելիքների ստուգման առաջադրանքները կազմում են դպրոցների մեթոդիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված մոդուլների (առնվազն 5 տարբերակ): Առաջադրանքների նյութն ընտրվում է. («Русский язык» учебник 4-класса)

2) Դպրոցի տնօրենը հաստատում է առաջադրանքները: Գրավոր աշխատանքի կատարման համար տրվում է 90 րոպե, գնահատումը՝ 10 միավորային համակարգով:

3) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 30 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

9. 9-րդ դասարանի ավարտական քննություններն անցկացվում են.

9.1. «Բնագիտություն» առարկայից «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Հայաստանի աշխարհագրություն»՝ աշակերտի ընտրությամբ, հունիսի 4-ին (գրավոր):

1). Ավարտական քննությունն անցկացվում է ԳԹԿ-ի կազմած թեստերով, գնահատումը՝ 20 միավորային համակար-

գով: Քննության համար տրվում է 120 րոպե:

2) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 40 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

10. «Հայոց լեզու, գրականություն» առարկայից՝ հունիսի 7-ին (գրավոր):

1) Ավարտական քննությունն անցկացվում է ԳԹԿ-ի կազմած թեստերով: Գնահատումը՝ 20 միավորային համակարգով: Քննության համար տրվում է 120 րոպե:

2) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 40 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

11. «Մաթեմատիկա» առարկայից՝ հունիսի 11-ին (գրավոր):

1) Ավարտական քննությունն անցկացվում է ԳԹԿ կազմած թեստերով: Գնահատումը՝ 20 միավորային համակարգով: Քննության համար տրվում է 120 րոպե:

2) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 40 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

12. «Օտար լեզու» առարկայից (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներ) աշակերտի ընտրությամբ՝ հունիսի 14-ին (գրավոր):

1) Ավարտական քննությունն անցկացվում է ԳԹԿ-ի կազմած թեստերով: Գնահատումը՝ 20 միավորային համակարգով: Քննության համար տրվում է 90 րոպե:

2) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 30 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

13. «Հայոց պատմություն» առարկայից՝ հունիսի 18-ին (գրավոր):

1) Ավարտական քննությունն անցկացվում է ԳԹԿ-ի կազմած թեստերով: Գնահատումը՝ 20 միավորային համակարգով: Քննության համար տրվում է 120 րոպե:

2) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 40 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

14. «Ռուսաց լեզու» առարկայից՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝ հունիսի 21-ին (գրավոր):

1) Ավարտական քննությունն անցկացվում է ԳԹԿ-ի կազմած թեստերով: Գնահատումը՝ 20 միավորային համակարգով: Քննության համար տրվում է 90 րոպե:

2) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 20 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

15. Գրավոր քննությունների քննական առաջադրանքները քննասենյակում հրապարակելուց հետո ուշացած

ՆԵՏՐՈՒՄ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արցախի պետական համալսարանը հայտարարում է մագիստրատուրայի և ասպիրանտուրայի 2012-2013 ուստարվա ընդունելություն:

Փաստաթղթերն ընդունվում են. 1) Մագիստրատուրայի համար՝ ա) ս.թ. հունիսի 11- ից - 22- ը (անվճար և վճարովի համակարգերում, առկա և հեռակա բաժինների համար) բ) ս.թ. հուլիսի 2-ից օգոստոսի 17-ը (վճարովի համակարգում, առկա և հեռակա բաժինների համար)

10. սովորողների մուտքը քննասե- նյակ արգելվում է:

16. Գրավոր աշխատանքները գնահա- տելիս սևագրությունը չի գնահատվում:

17. Սովորողը քննություններին ներկա- յանում է անձը հաստատող փաստաթղ- թով՝ անձնագրով կամ ծննդյան վկայակա- նով:

18. «Ֆիզկուլտուրա» առարկայից քն- նությունները կազմակերպվում են հան- րակրթական մյուս առարկաների քննու- թյունները սկսելուց առնվազն 5 օր առաջ:

Քննություններն անցկացվում են հա- մաձայն Նախարարության կողմից հաս- տատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրա- պետության հանրակրթական դպրոցների 9-րդ ավարտական դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայի քննություն- ների նորմատիվային պահանջների, գնա- հատումը՝ 10 միավորային համակարգով:

19. Հանրակրթական հիմնական ընդ- հանուր և հատուկ ծրագրեր իրականաց- նող ուսումնական հաստատությունների մտավոր հետամնացություն ունեցող սով- րողների գիտելիքների ստուգումը և ամ- փոփումը կատարվում է համաձայն անհա- տական ուսուցման պլանների (ԱՌՊ):

20. 12-րդ դասարանում պետական ա- վարտական քննություններն անցկացվում են ներքոհիշյալ օրերին.

20.1. «Բնագիտություն» - հունիսի 2-ին, քննությանը տրվում է 120 րոպե:

20.2. «Հայոց լեզու և հայ գրականու- թյուն» - հունիսի 6-ին, քննությանը տրվում է 120 րոպե:

20.3. «Մաթեմատիկա» - հունիսի 9-ին, քննությանը տրվում է 120 րոպե:

20.4. «Օտար լեզու» - հունիսի 13-ին, քննությանը տրվում է 90 րոպե:

20.5. «Հայոց պատմություն» - հունիսի 16-ին, քննությանը տրվում է 120 րոպե:

1) Կրթության առանձնահատուկ պայ- մանների կարիք ունեցող երեխաների հա- մար լրացուցիչ տրվում է 40 րոպե՝ ապա- հովելով երեխայի կարիքին համապա- տասխան պայմաններ:

2) Քննություններն անցկացվում են ԳԹԿ-ի կազմած թեստերով՝ քննական կենտրոններում, գնահատումը՝ 20 միավո- րային համակարգով:

21. Ուսերեճով ուսուցմամբ դասա- րանների համար սահմանվում է քննու- թյուն «Ուսու գրականություն» առարկայից, մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ քննաշրջանի ընթացքում (բանավոր):

22. «Ֆիզկուլտուրա» առարկայի քն- նությունները կազմակերպվում են հան- րակրթական մյուս առարկաների քննու- թյուններն սկսելուց առնվազն 5 օր առաջ: «Ֆիզկուլտուրա» առարկայի ավարտա- կան և պետական ավարտական քննու- թյուններն ընդունվում են Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված հանձնա- ժողովի կողմից՝ հետևյալ կազմով՝ հանձ- նաժողովի նախագահ, դասավանդող ու- սուցիչ և հանձնաժողովի երկու անդամներ (անդամներից առնվազն մեկը՝ տվյալ ա- ռարկայի մասնագետ):

Քննություններն անցկացվում են՝ հա- մաձայն Նախարարության կողմից հաս- տատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրա- պետության հանրակրթական դպրոցների 12-րդ ավարտական դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայի քննություն- ների նորմատիվային պահանջների, գնա- հատումը՝ 10 միավորային համակարգով:

23. Քննության օրը հարգելի (փաս- տաթղթով հիմնավորված) պատճառով քն- նությանը չներկայացած սովորողը քննու- թյուն է հանձնում:

1) Հիմնական դպրոցի (մինչև 19 տարե- կան) սովորողը՝ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում:

2) Միջնակարգ դպրոցի (մինչև 19 տա- րեկան) սովորողը՝ հուլիսի 2-8-ն ընկած ժամանակահատվածում:

ՑԱԿ

Table with 5 columns: N, ՇՊԳ, Մասնագիտացման խմբակ, Պատ. արտադր., Վճարովի, Հատուկ. ՑԱԿ

բ) Ասպիրանտուրայի համար՝ ս.թ. օգոստոսի 27- ից մինչև սեպտեմբերի 7- ը ՑԱԿ

Table with 5 columns: N, ՇՊԳ, Մասնագիտացման խմբակ, Պատ. արտադր., Վճարովի

Սանրաման տեղեկությունների համար դիմել ԱրՊՀ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժին, հեռախոս՝ 95-17-24:



ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐԶ

Գարունը կրկնակի գարնանաշունչ էր ապրիլյան երևանում՝ հայ ժողովրդի տուֆակերտ մայրաքաղաքում: Կազմակերպվել էին մշակութային տարբեր միջոցառումներ, որոնց թվում առանձնահատուկ տեղ էր գրավում գրողների համահայկական 6-րդ համաժողովը, որ տևել է ապրիլի 20-24-ը: Այդ հետաքրքիր միջոցառումը կազմակերպել էին ՀՀ Սփյուռքի նախարարությունը և Հայաստանի գրողների միությունը: Դա էլ հենց նպատակ էր, որ ծրագրի դառնար բովանդակալից՝ ազգային ճակատագրի հետ առնչվող հիմնախնդիրների ընդգրկմամբ:

Համաժողովի պատվիրակները տարբեր երկրներից խորհրդանշուն էին մի կողմից հայկական գաղթօջախների ազգային բազմազանությունը, մյուս կողմից՝ մեքսիկայի լեզվով ստեղծվող գրականության խոսուն ընթացքը:

Ներկայացուցչական էր պատվիրակների ընդհանուր կազմը: Նրանք հաճախել էին ԱՄՆ-ից, Սիբիրիայից, Թուրքիայից, Լիբանանից, Իրանից, Ֆրանսիայից, Շվեյցարիայից, Գերմանիայից, Եգիպտոսից, Արգենտինայից, Իսրայելից, Աբխազիայից, Ավստրալիայից, Վրաստանից, Ռուսաստանից, Անգլիայից, Կիպրոսից, Կանադայից, Ռուսիայից, Լիտվայից, Արցախից: Դա հայ ստեղծագործող մտավորականների մի աստղաբույլ էր՝ յոթ տասնյակ հոգուց բաղկացած: Եվ երբ ապրիլի 20-ին՝ միջոցառումների առաջին օրը, նրանք հավաքվեցին երևանի «Էրեբունի Պլազա» հյուրանոցի 9-րդ հարկի մեծ դահլիճում և արևելահայերեն ու արևմտահայերեն բացականշարունակությամբ ողջունեցին միմյանց, թվաց՝ ի հեծուկա թուրք բարբարոսների, իրար ձեռք են սեղմում Արևելյան և Արևմտյան Հայաստանի իրար կարոտած լեռներն ու գետերը, քաղաքներն ու գյուղերը: Այդ զգացումներին զուգարկվեց գրքերի ցուցահանդես», որ նույնպես մեր ազգային դիմագծի փայլուն խորհրդանշաններից է, հայ գրքի տպագրության 500-ամյա հոբելյանի վկայություններից մեկը:

Ժամը 12-ն անց 30 րոպեն է: «Առնո Բաբաջանյան» համերգարահուն ՀՀ Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը բացում է համաժողովը: Հնչում է Հայաստանի օրհներգը: Բոլորը ոտքի են կանգնում և ծայնակցում երաժշտությանը: Ասես ալիքվում են հայոց հիմնավորը վանքերի ու եկեղեցիների գանգերի ղողաճները՝ Սուրբ Կարապետ վանքից մինչև Գանձասար, Դաղիվանքից մինչև Սուրբ Էջմիածին: Այդ պահին ասես դահլիճի կամարների տակ հնչում է նաև Մեծն Չարենցի մարգարեական խորհուրդը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Մինչև ելույթներն սկսվելը մասնակիցներին են ներկայացվում ՀՀ նախագահ Ա. Սարգսյանի, վարչապետ Տ. Սարգսյանի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ողջույնի ամանակները:

Ելույթներ են ունենում պատվիրակությունների ղեկավարները, որոնք ողջունում են միջոցառումը՝ այն համարելով պատմական երևույթ և միանգամայն անհրաժեշտ: Սրտառուչ ելույթների մեջ հնչում է նաև ԼՂՀ գրողների միության վարչության նախագահ Վ. Հակոբյանի խոսքը՝ հաղթանակած Արցախի, նրա հերոսական ժողովրդի, արարող մտավորականության անունից, որն ընդունվում է բուռն ծափահարություններով: Օրվա երկրորդ կեսին ավտոբուսները ճանապարհվում են դեպի Էջմիածին: Տեղի է ունենում համդիպում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ: Ջերմ ու անմիջական գրույցների ընթացքում հոլովվում են հոգևոր և աշխարհիկ բնույթի բազմապիսի հարցեր, բնմարկվում աղանդավորական շարժման անհիմաստ բնույթը, նշվում դրանց դեմ պայքարելու քաղաքակիրթ ուղիները: Ընդգծվում է Հայոց Առաքելական եկեղեցու տեղն ու դերը ժամանակակից բարդ ու հակասական պայմաններում: Էջմիածնից պատվիրակները համախուսք ուղևորվում են Օշական: Նրանց խոսքն ու գրույցն անմահ Մեսրոպ Մաշտոցի մասին է, մի անհատականություն, որի ստեղծած այբուբենի շնորհիվ ժողովուրդը դիմակայել է բազում արհալիրների, վայրենի ցեղերի ճնշումներին ու պահպանել հայի ինքնատիպ, աստվածաշնորհ տեսակը: Բոլորն ակնածանքով ծաղիկներ են դնում մեր առաջին ուսուցչի մարմարյա շիրմաքարին, իսկ դամբարանից դուրս գալուն պես շատերն արտասանում են առանձին հատվածներ Սիամանթոյի և Պարոյր Սևակի պոեմներ

րից՝ նվիրված Մաշտոցի ոգուն ու ազգափրկիչ գյուտին:

Ապրիլի 21-ին տեղի է ունենում համաժողովի լիագումար նիստը: Այն բացում է ՀՀ գրողների միության նախագահ, գրող-հրապարակախոս Լևոն Անանյանը: Մինչև նիստն սկսվելը մենք հասցրել էինք գրուցել նրա հետ: Այն հարցին, թե ինչու գրողների համահայկական 6-րդ համագումարը, ինչպես նախորդները, տեղի է ունենում ոչ թե ամառային ամիսներին, այլ ապրիլին, նա պատասխանել է, որ 2012-ը բացառիկ տարի է, որովհետև ապրիլի 21-ին հայ գրական-մշակութային կյանքում երկու կարևոր միջոցառում է մեկնարկում՝ լրանում է հայ գրատպության 500-ամյակը և ՅՈՒՆԵՍԿՕ-ն երևանը հռչակել է գրքի համաշխարհային մայրաքաղաք: Նա հայտնեց, որ ՀՀ Սփյուռքի նախարարությունն ընդառաջել է ՀԳՄ նախագահության խնդրանքին, և սփյուռքահայ գրողները հնարավորություն են ստացել համաժողովի օրերին մասնակցելու տոնական հանդիսություններին, որն էլ նոր բովանդակություն կարող է հաղորդել համաժողովին ու նոր տպավորություններով հարստացնել մասնակիցների հիշողությունը:

Այդպես էլ եղավ: Հենց ապրիլի 21-ի ծրագրի իրականացումն ապացուցեց, որ համաժողովն անհրաժեշտ էր և տեղին: Լիագումար նիստի կիզակետում հայ գիրքն էր, որը մեր ազգային ճակատագրի ամբողջական առհավատյան է եղել և այսօր էլ այդպիսին է: Այդ են վկայում Գ. Սնիսյանի (Վրաստան), Ա. Իսահակյանի (Հայաստան), Ա. Սեփետյանի, Ն. Տետեանի, Ժ. Դանիելյանի, Հ. Մարտիրոսյանի, Ա. Կիրակոսյանի (Բելոսլավիա), Թ. Թորանյանի (Հայկա), Ա. Նազգաշյանի (Իսրայել), Հ. Նալբանդյանի (ԱՄՆ), Ա. Դազարյանի (Երևան), Մ. Ադամյանի (Անգլիա), Ա. Վերմիշևայի, Ա. Սիմոնյանի (Ռուսաստան), Թ. Տեր-Հակոբյանի և Խաչերի (Իրան), Հ. Բալյանի (Ֆրանսիա), Ա. Դանիելյանի (Երևան), Խ. Արամունու (ԱՄՆ), Մ. Շարափյանյանի (Կանադա), Ա. Բոստանջյանի (Վրաստան), Տ. Գաբոյանի (Սիրիա), Ա. Մուրադյանի (Երևան) և այլոց ելույթները: Նրանք բոլորն էլ հնչեցնում էին Հայաստան-Արցախ-Սփյուռք սերտ և արդյունավետ կապերի ամրապնդման կարևորությունը, որն ունի ոչ միայն մշակութային, այլև քաղաքական-նազմավարական նշանակություն: Ելույթների մեծ մասում ընդգծվում էին գրքի հետ կապված երեք գործոնները՝ գիրք գրելը-տպագրելը-ընթերցողին հասցնելը: Քննարկված կիզակետում էր նաև մայրենի լեզուն անաղարտ պահելու հիմնախնդիրը: Ելույթ ունեցողները նշում էին, որ աշխարհի տարբեր երկրներում ապրող ու ստեղծագործող հայ գրողների միջև պետք է ստեղծվեն սերտ կապեր: Դրա լավագույն միջոցներից մեկը տպագրված նոր գրքերի առաքումն է և մայր հայրենիքի շուրջը համախմբվելը:

Ներկա պետք է լինել, տեսնել ու զգալ այն հսկայական աշխատանքը, որ կատարվել էր երևանի «Կասկադ» համալիրում: Ապրիլի 21. օրվա երկրորդ կեսին այնտեղ բացվեց «ArmBookExpon» գրքի ցուցահանդեսը: Կասկադի վերընթաց բոլոր կանգառների շուրջը ցուցադրվել էին բանկարծեք գրքեր, հանրագիտարաններ, նկարների արվեստներ՝ տպագրված աշխարհի բոլոր ծայրերում: Մասնակիցները հետաքրքրվում էին նաև Արցախում լույս ընծայված մեր գրողների նոր երկերով, որոնց խորհրդանշական մի նոր երանգ էր հաղորդում մեր հայրենակից-բանդակագործ Ա. Բաղդասարյանի «Մենք ենք, մեր սարերը» (Տատիկ-պապիկի) հուշակոթողի լուսանկարային ցուցադրումը հենց Արցախյան գրատպավարի մուտքում:

Արարողությանը հաճելի շուք էր հաղորդել ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանի, պետական մի շարք այրերի և սփյուռքից ժամանած հայտնի բարերարների ներկայությունը:

Ապրիլի 22-ին ՀԳՄ նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում հրատարակիչների ազգային ասոցիացիայի անդամների հետ: Քննարկվեց «Հայ գրքի ճանապարհը, հիմնախնդիրներ և աշխարհաքաղաքական մարտահրավերներ» թեման: Մասնակիցները կարևորեցին գրքի տպագրության ուրակի, հրատարակիչ-հեղինակ փոխհարաբերությունների, տպագրական ծախսերի և այլ օրախնդիրներ թե՛ հայրենիքում և թե՛ Սփյուռքում:

Օրվա առաջին կեսից հետո հրավիրվեց գիտաժողով Մատենադարանի նոր, իրաչք մասնա-

շենքում: Քննարկվեց «Արդի հայ գիրքը աշխարհի մայրաքաղաքներում» թեման: Եգիպտոսից ժամանած Պերժ Թերզյանը հանգամանակից զեկուցեց եգիպտահայ գաղութում տպագրված թերթերի, հանդեսների ու գրքերի, նրանցում բարձրագույն մշակութային հիմնախնդիրների մասին: Ներկաները լարված ուշադրությամբ լսեցին Սկրտիչ Մարկոսյանին (Թուրքիա): Նա մատնանշեց Կ. Պոլսի հայ մշակույթի ներկայացուցիչների լարված ջանքերը՝ արևմտահայ դասականների երկերը վերահրատարակելու, ինչպես նաև Թուրքիայում գրականության և արվեստի բնագավառներում նրանց ներդրումներն ընդգծելու ուղղությամբ: Դրանք անհրաժեշտ քայլեր են առանձնապես մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ թուրքական իշխանությունները ժխտում են 1915թ. տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը և չեն դատապարտում այն հանցագործ ուժերին, որոնք կազմակերպեցին Հրանտ Դինքի սպանությունը:

Գիտաժողովի մասնակիցներն առաջինը լսեցին Արցախի ԳՄ վարչության նախագահ Վ. Հակոբյանի զեկուցումը:

Նա ներկայացրեց Արցախյան գրատպության պատմությունը՝ առանձնապես Շուշի քաղաքում, որտեղ 1828 թվականից սկսած, հրատարակվել են նշանակալից շատ գրքեր: Նա նշեց, որ Շուշին Էջմիածնից հետո Արևելյան Հայաստանում երկրորդ, իսկ Անդրկովկասում երրորդ քաղաքն էր, որտեղ գրատպությունը զարգացավ արագ տեմպերով: 19-րդ դարի վերջին, 20-րդի սկզբին Շուշիում հրատարակվել են 21 անուն թերթեր, որոնցից 19-ը՝ հայերեն, 2-ը՝ ռուսերեն: Շուշիի տպարաններում լույս են ընծայվել Մուրացանի, Պռոշյանի, Աբեղյանի, Բայրոնի և այլոց մի շարք երկեր:

Այդ օրն իրիկմադեմին մարդաշատ էր երևանի կենտրոնական զբոսայգիներից մեկը, ուր կանգնեցված էր հայ դասական քնարերգու Վ. Տերյանի երձակը: Այդտեղ ժամանակը տրամադրված էր երիտասարդ բանաստեղծներին: Նրանք հանդես եկան իրենց նոր ստեղծագործությունների ընթերցմամբ: Իսկ ուղիղ ժամը 22-ին լույսերի մեջ ճառագել էր Մատենադարանին հարող տարածքը, ուր «Երևանը՝ գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառման շարունակությունն էր, ուր ներկա էին ՀՀ նախագահ Ա. Սարգսյանը, վարչապետ Տ. Սարգսյանը, Ազգային ժողովի նախագահ Ա. Նիկոյանը, պետական այլ այրեր: Այդ երեկո ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Գրքի համաշխարհային մայրաքաղաք» տիտղոսը հանդիսավոր փոխանցվեց 2011թ. գրքի մայրաքաղաք Բուենոս Այրեսից երևանին:

Ապրիլի 23-ին համաժողովի մասնակիցները կրկին հավաքվել էին ՀԳՄ նիստերի դահլիճ, ուր բնարկեցին «Սփյուռք-Հայաստան» գրական միասնական դաշտ» հարցը, և ապա տեղի ունեցավ ամփոփիչ նիստը:

ՀԳՄ նախագահ Լ. Անանյանը գոհունակությամբ նշեց, որ թեկուզ ծանր ու լարված էին օրերը, համաժողովը հասավ իր նպատակին: Սակայն անելիքները դեռ շատ են: Մենք՝ գրողներս, պետք է շարունակենք մեր առաքելությունը, մեր բարձրարժեք գործերով սատար կանգնենք ժողովրդին ու երկրին, նպաստենք «Հայրենիք-Սփյուռք» սերտ և արդյունավետ կապերի ամրապնդմանը, որ բխում է աշխարհասփյուռ հայության ճակատագրից:

Այդ ուղղությամբ կարևոր քայլերից մեկն այն է, որ Սփյուռքի մի շարք գրողների հանձնեցիցը Հայաստանի գրողների միության անդամատուներ: Նա ընդգծեց. «Մի բան անառարկելի է՝ որ համաշխարհային գրաբաղադրումը, մասնավոր փոքրաթիվ ժողովուրդներից, հարաբերությունների նոր որակ է ակնկալում, տազանապնդում դիմակայելու նոր գործիքներ, որոնցից ամենակարևորը եղել և մնում է միասնությունը»:

Համաժողովի մասնակիցները ապրիլի 24-ին այցելեցին Ծիծեռնակաբերդ ու ժողովուրդներով խնկարկեցին 1915-ի մեկուկես միլիոն անմեղ զոհերի սուրբ հիշատակը:

Գրողների համահայկական 6-րդ համաժողովը կրկին ապացուցեց, որ գիրքը ժողովրդի ազգային ակնկալիքների և ոգու հավերժախոս վավերագրություն է ու միասնության կամուրջ դարձրել և սերունդների համար:

Սուկրապ ԽԱՆՅԱՆ

Լույս է տեսել  
**ՄԱՆԿՈՒԹՅԱՆ  
ՍՈՒՆՈՒԿ  
(Երբ աշխարհը  
եսնում են  
երեխաների աչքերով)**



ԼՂՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ վերջերս լույս տեսավ Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցի տարրական դասարանների դասվար Լիանա Ծատրյանի ջանքերով հավաքված ու կազմված՝ նույն դպրոցի աշակերտների ստեղծագործությունների ժողովածուն (նրանում զետեղված նյութերը տպագրվել են «Լուսայգ» մանկապատանեկան թերթում):

Ըստ էության, ժողովածուն անկախություն կերտող ու զարգացող Արցախի երեխաների ստեղծագործական արդյունքների առաջին տպագիր օրինակն է, որը, շնորհիվ երիտասարդ ուսուցչուհու, խնամքով հավաքվել ու պահվել է: Ավելին կարելի է ասել. ժողովածուն հիմնականում տեղ են գտել նրա աշակերտների ստեղծագործական թրթվածքները, որոնցում անժխտելի է ուսուցչի աշակերտակենտրոն մանկավարժական մոտեցման դերը: «Մանկության մոլորակ» մանկական ժողովածուն էությանը հետաքրքիր է ինչպես դպրոցականների, այնպես էլ ուսուցիչների համար: Ժողովածուն զետեղված են տարբեր ստեղծագործական աշխատանքներ, որոնք կիրառելի են տարբեր միջոցառումների, խմբային ու գործնական աշխատանքների ժամանակ: Գիրքը կազմվել է թեմատիկ բաժանումներով, և յուրաքանչյուր բաժին ներկայացված է յուրովի:

«Հայրենիքս անառիկ բերդ, լեզուս՝ զենքն իմ անպարտ» բաժինը ներկայացնում է դպրոցականների այն ստեղծագործական պատասխանները, որոնցում նրանք արտահայտում են իրենց սերը հայրենիքին, նրա հերոսների ու նրանց կյանքին: Երեխաները ծանոթ են հայ ժողովրդի բազմադարյան պատմությանը: Այստեղ մեծ տեղ է տրված երեխաների հայրենասիրական դաստիարակության իրականացմանը, որը դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների առաջնային խնդիրներից է:

Ուրախալի է, որ տարրական դասարանների երեխաների մոտ արդեն իսկ ձևավորված են հայրենասիրական անկեղծ զգացմունքներ: Դաստիարակում էլ, որ նրանցից շատերը ոչ միայն գովերգում, այլև մատնանշում են ազգային խորհրդանշան դարձած այն հերոսներին, որոնց ուզում են նմանվել:

Մեծ է նաև երեխաների սերը մայրենիքի, մեր հազարամյա լեզվի, նրա անաղարտության նկատմամբ: Նրանք ոգևորված են գրում իրենց

ԳՈՐԾ

# ԵՎ ՖԻԶԻԿԱՆ ԴԱՌՆՈՒՄ ԵՐ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանա Բաղունցը հին ստեփանակերտցի է: Տարիքի համեմատ (1934 թվականին է ծնվել) առնչյալ է, եռանդուն: Փորքամարմին այս կինն անընդհատ շարժման մեջ է: Ավտոբուս նստել չի սիրում: Սիրում է ուտել քայլել: Ս. Սպանդարյան փողոցում է բնակվում: Այս և հարակից Մետաքսագործների, Ա. Տերտերյան, Շ. Դանիելյան, Ա. Պուշկինի փողոցների մոտ 300 տների բնակիչները թաղային կոմիտեի նախագահի գործը մոր մահից հետո վստահել են դատերը՝ արդեն 30 տարուց ավելի: Դժբախ է շրջում իր «տարածքում», գրուցում մարդկանց հետ, հարցնում որպիսությունը: Մեծ ու փոքրին անուններով գիտի: Գիտի ով ով է, ինչու է շնչում, տանն ինչ պակաս-պռատ կա, ինչ նոր բան է ավելացել, ով գնաց քաղաքապետարան դժգոհ վերադարձավ, ում ընդառաջեցին և այլն: Մեծ ու փոքր էլ նրան գիտեն: Փորքերը նրան հանդիպելիս իրենց ծնողների նման հարգալից ողջունում են: Հիմա իր սաները թաղամասի երեխաներն են, ում արդեն ֆիզիկայից գիտելիքներ չի հաղորդում, դաստիարակում է ժողովրդին ու գործին՝ նվիրվածությամբ իր օրինակով առանց բառերի, առանց խրատների:

Կապը քաղաքապետարանի, համայնքային ենթակայության կառույցների հետ ամուր է պահում: Բնակիչների և բողոքն է տեղ հասցնում, և շնորհակալական խոսքը: Երբ զանգահարում է որևէ հիմնարկություն, կարիք չի լինում ներկայանալու, ծայրից անմիջապես ճանաչում են: Ոստիկանության տեղամասային տեսուչը եթե թաղամաս չի էլ գալիս, չի լինում օր, որ չզանգահարի թաղկոմի նախագահին՝ «ինչ կա-չկա»-ի պատասխանն իմանալու: Հարկ եղած դեպքում վերջինս է զանգահարում ոստիկանին: Դե, մեկ-մեկ վեճեր են լինում, փորձում են միասին հարթել: Սակայն ընդհանուր առմամբ, ժ. Բաղունցի հավաստմամբ, թաղամասի բնակիչները համերաշխ են: Հիշում է, թե ինչպես Քարվաճառի ուղղությամբ ռազմագործողության օրերին կանայք մի գիշերում 40 զույգ գուլպա գործեցին և ուղարկեցին ճակատ՝ մեր մարտիկներին:

«Կան թաղկոմի նախագահներ, ովքեր դժգոհում են, թե բնակիչները պասիվ են, ասենք, չեն մասնակցում շաբաթօրյակներին: Ես ում ինչ հանձնարարում եմ կատարում եմ», - ասում է ժ. Բաղունցը: Հարգանքն է երևի, որ մարդկանց ստիպում է չկոտրել նրա խոսքը: Իսկ այդ հարգանքը պարտավորեցնող է: «1993 թվականից դպրոցում չեմ աշխատում, - շարունակում է գրուցակիցս: - Իսկ իմ բնավորությունն այնպիսին է, որ պիտի անպայման ինչ-որ բան անեմ, ինչ-որ բանով զբաղվեմ: Թաղկոմի նախագահի աշխատանքն ինձ օգնում է, որ ասարեմ, քանզի բոլորի հոգսը իմն եմ համարում: Երբեմն տնեցիները դժգոհում են նկատել տալով, թե ուրիշների մասին ավելի շատ եմ մտածում, քան իրենց»: Ուրիշների համար կարող է տարբեր դեմքեր բախել, լուծումներ որոնել, բայց երբ խոսքն իրեն է վերաբերում, հետևողական չէ: Ուր հոգով ինքը, որդին, հարսն ու հինգ թոռները, բնակվում են 1950 թվականին մոր կառուցած, հարմարություններից զուրկ տանը, մի սենյակում: Հողամասը մինչև Հայրենական մեծ պատերազմը հայրն էր գնել: Ինչ-ինչ պատճառներով չի կարողացել կառուցապատել, հետո մեկնել է ռազմաճակատ ու չի վերադարձել: Իսկ որդու համար առաջնայինը զավակներին ուսում տալն է: «Երեխաներն ավարտեն, հետո տունը կկառուցեն»: Մայրը թերահավատ է՝ կկառուցի, չի՞ կառուցի... Սակայն հույս ունեն, որ, որպես պաշտպանության բանակի սպայի, նրան բնակարան կհատկացնեն: 1992 թվականից նույն գործատու է ծառայում: Երբ ժամանակին հիշեցրել են բնակարանի համար հերթագրվելու մասին, ձեռքը թափ է տվել: «Գլխիս ծածկ կա, չի կաթում»: Մայրը պատմում է, որ որդին նպատակ էր դրել 11 երեխա ունենալ մի ֆուտբոլային թիմ: Պատերազմը խանգարեց: Հինգ թոռներից ավագը 24 տարեկան է, աշխատում է, կրտսերը դպրոցական է 10 տարեկան: Այս կնոջ համբերությունը, թվում է, անսպառ է: «Ամեն նեղությունս կոփմանանք, միայն թե արկերի սուլոց այլևս չլսենք»:

Որպես երկրի, մայրաքաղաքի ապագայով մտահոգ քաղաքացու՝ ժ. Բաղունցին շատ է հուզում այն հանգամանքը, որ բնակարանի կարիք ունեցողները շատ են, հատկապես երիտասարդ ընտանիքների շրջանում: Ցավում է, որ մարդիկ, առանձնապես երիտասարդները չեն կարողանում աշխատանք գտնել, իսկ աշխատանք չունեցող մարդը թե՛ ընտանիքում, թե՛ հասարակության համար իրեն պիտանի չի համարում, բարդութալորվում է: Իբրև թաղկոմի նախագահ ցանկանում է Սպանդարյան փողոցը վերջապես տեսնել բարեկարգ: Տարիներ շարունակ փողոցի բարեկարգումը այլևայլ պատճառներով ձգձգվում է: 1970 թվականին Սպանդարյանը, իբրև գեղեցիկ, բարեկարգ, ծաղկաշատ ու կանաչապատ փողոց, մրցությունում հաղթող է ճանաչվել: Այժմ նրանից

գրեթե ոչինչ չի մնացել. հրետակոծությունից շատ է վնասվել:

Հարկավ, հասարակական աշխատանքին նվիրվածությունը ժ. Բաղունցի բնութագրական գծերից է: Բայց նրա ամենամեծ թուլությունը գիրքը, գրականությունն է, պոեզիան:

Հ. 1 դպրոցն ավարտեց ոսկե մեդալով: Երևանի բժշկական ինստիտուտ ընդունվեց՝ առանց քննություններ հանձնելու: Երբ առաջին ամգամ դիպեցին ծառայության, ուշաթափվեց: Հիվանդացավ և ուսումը չշարունակեց: Բանասիրական ֆակուլտետ ընդունվելու իր փայլալայտ երազանքը կարող էր իրականացնել: Հաջորդ տարի փաստաթղթերը տվեց ծանոթ մեկին՝ հանձնելու: Բարձր մանկավարժական ինստիտուտ: Այդ տարի բանասիրական չկար թե ինչ, սա էլ հանձնեց ֆիզմաթ: Առաջին կուրսում գրական խմբակ էր համախում: Նրա գեղուցումը լսելով՝ դասախոսներից մեկը խորհուրդ տվեց տեղափոխվել բանասիրական բաժին: Տարբերությունները հանձնեց և միանգամից պետք է նստեր 3-րդ կուրսում: Կուրսի ավագը հանդիմանեց կոմերիտքարտուղարին: «Վախենում ես, ֆիզմաթում դժվար է սովորելը: Բայց դու կոմերիտական ես»: Եվ մնաց ֆիզմաթում: «Թե չէ ամբողջ կյանքիս երազանքը եղել է սովորել բանասիրականում»:

Վեցերորդ դասարանում էր: Դասընկերներով որոշեցին փող հավաքել, գնալ Երևան՝ հանդիպելու Ավետիք Իսահակյանին: Հայրը լեզվի և գրականության ուսուցչուհի Քնար Սուլեյմանյանը խորհուրդ տվեց. «Ավելի լավ չէ՛՝ մանակ գրեք»: Չգրեցին: Վարպետին տեսնելը անբացատրելի մի ցանկություն էր: Մնաց անկատար. կոպեկներով ո՛ւր գնային:

Ընթերցանությունը աշակերտուհի ժամնայի տարերքն էր: Դպրոցի գրադարանավարուհին՝ Արաքսյա Քանայանը, ձեռքը կրակն էր ընկել: Մի անգամ տարավ ուսուցչանոց ու թե. «Ազատեք այս աղջկանից: Նոր գիրք է ուզում, որտեղի՞ց տամ. մեզ մոտ գիրք չկա, որ կարողացած չլինի»: Կյանքում իրեն պարտական է համարում Ք. Սուլեյմանյանին՝ ամեն ինչով: Երբ առաջին անգամ եղավ սիրելի ուսուցչուհու տանն ու տեսավ գրքերը, գլուխը պտտվեց՝ այդքան գիրք: Մտքում որեք, որ ինքն էլ պիտի մնան գրադարան ունենա: Ունեցավ: Ինչպես ուսուցչուհին էր իր գրքերից տալիս սաներին՝ ընթերցելու, այնպես էլ՝ հետագայում ինքը: 1-ին և 9-րդ դպրոցների գրեթե բոլոր աշակերտները օգտվում էին նրա գրադարանից:

Առաջին գիրքը Բորիս Պուլտյի «Պատմություն իսկական մարդու մասին» վիպակն էր: Մայրը փող էր տալիս՝ դպրոցական բուքետից ուտելիք գնելու, մինչդեռ ինքը կոպեկ-կոպեկ հավաքեց ու գնեց 13 ռուբլի արժեցող այդ գիրքը: «Գրախանութի Ասյա տյոտյան տեսավ, որ գիրք շատ եմ սիրում: Եվ լավ գրքերից ինձ համար պահում էր»: Իսկ Բաքվում ուսանելու տարիներին ծանոթացավ մի տարեց մարդու հետ, որը բուկինիստական գրքեր էր վաճառում: Եթե լավ գիրք էր ձեռքն ընկնում, նա պահում էր բարեկամուհու համար: Արձակուրդներին տուն էր գալիս ծանր պայուսակով: Ուտելիք կամ հագուստ չէր բերածը. գրքեր էին:

Գրողների հետ հանդիպումները երանությամբ է հիշում: Ուսանողական ամառային արձակուրդներ էին, ինքը Ստեփանակերտում էր: Միլվա Կապուտիկյանն առաջին անգամ Ղարաբաղ էր եկել: Հանդիպումը թատրոնի շենքում էր: «Ծաղկեփունջ տարա: Ինձ համբուրեց, ձեռքս սեղմեց: Ձեռքի քնքշությունը մինչև հիմա չեմ մոռանում»:

Ժ. Բաղունցը գրականության հանդեպ իր սիրով վարակեց աշակերտներին: Ֆիզիկա ուսուցանելը նրա պարտականությունն էր, և առարկային հատկացված դասաժամերին զարմանահարաշ այդ գիտության գաղտնիքներն էր բացում երեխաների համար: Սակայն ֆիզիկան միայն ֆիզիկա չէր: Ֆիզիկան դառնում էր և սաների շուրթերին հնչող հայ բանաստեղծություն՝ հայրենիքի, բնության մասին, սիրո ու կարոտի, ցավի ու ցասման դողանջներ:

9-րդ դպրոցում մաթեմատիկայի թեթևմով դասարանում դասավանդում էր: 10 ժամ ֆիզիկա կար շաբաթական: Շաբաթվա վերջին օրը վերջին դասի 5-10 րոպեն չէին պարապում, բանաստեղծություններ էին կարդում: Երեխաներն արդեն վարժվել էին, և ժամանակին հիշեցնում էին. «Ընկեր Բաղունց, 10 րոպե է մնացել»: Աշակերտներն իրենք էին փնտրում, գտնում, բանաստեղծություններ ընտրում: Հայրը լեզվի և գրականության ուսուցիչ Բաղրյան Բորիսի հետ մի դասարանում հավաքվում էին և կարդում՝ ով ինչ սիրում էր: Ինքը հատկապես Համո Սահյան էր շատ սիրում: Մինչև հիմա նախկին սաները հանդիպելիս շնորհակալ են լինում. «Ձեր շնորհիվ ենք պոեզիան սկսել սիրել»:

Տատի՝ բանասեր դառնալու անկատար փափագը թո՛ղ է իրականացնում: Իսկ ստեղծած գրադարանը ծառայում է նաև թոռան ուսանող ընկերներին:

# ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ



Ուսուցչությունը առաքելություն է, որ տրվում է մարդուն՝ այդ մասնագիտությունն ընտրելու պահից: Եվ այս խրթին ժամանակներում, երբ ինֆորմացիայի առատությունն իր հետ բերում է մշուշոտ հարցերի տարափ, մեր մատաղ սերնդի համար լավ ու սիրելի մանկավարժի արժեքավոր խոսքը հանապազօրյա հացի պես անհրաժեշտ է դառնում:

Մեր սիրելի գործընկեր, հիանալի մանկավարժ ու լավագույն մասնագետ Անժելա Ֆարամազյանը (կամ ինչպես աշակերտներն են ասում, Անժելա Ալբերտովնան) հենց այդ մանկավարժներից է: Նրա գեղեցիկ խոսքը՝ համեմատված պատկերավոր արտահայտություններով, մանկավարժական խորաթափանցությամբ, ուղղություն է տվել բազում աշակերտների, նրա ժպիտով թևակոխել ու խոսքերով ոգեշնչվել են, նրա խորհուրդներին հետևելով՝ դարձել լավ մարդիկ:

Ծնվել է 1962թ., Ստեփանակերտում: Նախախնամությունը երկի նրա համար նախատեսել էր մանկավարժությունը: Եվ նա 1980թ. ընդունվելով Աղբեջանի մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության բաժինը, լիովին տիրապետելով այդ լեզվի գանձերին, վերադարձել է և 1987թ. աշխատել Զանաչի միջնակարգ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի, իսկ 1993-ից արդեն հ. 7 դպրոցում էր: Կարճ ժամանակում իր բարեհամբույր ու հրաշալի բնավորության շնորհիվ նա դարձավ կոլեկտիվի սիրելին: Իսկ փայլուն գիտելիքներն ու դրանք անթերի մատուցելու կախարհական արվեստն աշակերտների համար նրան դարձրին անգնահատելի ու անչափ սիրելի ուսուցչուհի:

Մեծ ջանքերով մեր սիրելի գործընկերոջ 50-ամյակը: Կոլեկտիվը սիրով ու խորին հարգանքով շնորհավորում է սիրելի ուսուցչուհու հոբելյանը, ցանկանում էրջանկություն, առողջություն և ամսպառ եռանդ: Թող նա միշտ հանդիպի սիրով ու հարգանքով լեցուն հայացքների, թող կյանքը նրան միայն հաճելի անակնկալներ բերի, և մարդկային արժանիքների այն բոլոր հունդերը, որ նա ցանց էր դպրոցում, հարյուրապատիկ բերք տան և լցնեն աշխարհը սիրով, բարությամբ ու գիտությամբ:

**Ե. Չարենցի անվան հ. 7 հիմն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ**

# ՀԻՇԱՐԺԱՆ ՏՈՆ

Ապրիլի 27-ին Շեխերի միջնակարգ դպրոցում դասվար Ավարդ Հարությունյանի ղեկավարությամբ Այբուբենի տոնի առթիվ միջոցառում էր կազմակերպվել: Մասնակցում էին առաջին դասարանի աշակերտները:

Սակայն ի զարմանք բոլորիս՝ կազմակերպվել էր նաև ռուսերենի Այբուբենի տոն՝ երկրորդ դասարանցիների մասնակցությամբ, որի նախաձեռնողն ու կազմակերպիչը ռուսաց լեզվի սկսնակ ուսուցչուհի Լուսինե Սևունյանն էր: Նախաձեռնությունը Շեխերի միջնակարգ դպրոցում նորություն էր: Տոնը սկսվեց: Դասիչը զարդարված էր գեղեցիկ ու ճաշակով: Առաջին և երկրորդ դասարանցիները երաժշտական նվագակցությամբ մեկը մյուսին հաջորդելով, համարակալ ու վստահ արտասանում էին հայերեն և ռուսերեն բանաստեղծություններ՝ նվիրված տոնին, Մաշտոցին, ուսուցիչներին:

Պարեցին հայկական, ռուսական ժողովրդական պարեր, ներկայացրին մորը նվիրված հետաքրքիր ու դաստիարակչական բեմադրություն, ինչպես նաև ռուսերենով՝ «Երեք խոզուկներ» հեքիաթը: Հիացած էինք ճաշակով ընտրված հագուստներով:

Զգացվում էր, որ ուսումնական տարին զուր չի անցել: Երեխաները յուրացրել են անցածը, սերտել հայկական և ռուսական այբուբենը՝ շնորհիվ այդպիսի գրագետ, գործիմաց մանկավարժների, ովքեր ունեն բնատուր հատկանիշներ, սեր ու նվիրվածություն՝ ընտրած մասնագիտությանը, հավատարիմ են կոչմանը:

Միջոցառմանը ներկա էր ուսուցչական կոլեկտիվը՝ տնօրեն Լ. Աղավեյանի ղեկավարությամբ, դպրոցականներ, ծնողներ և շրջակա տղաները:

Երեխաները ստացան նվերներ ուսուցիչների կողմից:

Մենք՝ ծնողներս, երախտապարտ ենք ձեզ, ընկեր Հարությունյան և Լուսինե Ռուբենովնա: Ձեր շնորհիվ մեր երեխաները կարողացան յուրացնել հայոց ոսկեդեմիկ այբուբենը, և հայ երեխան հնարավորություն ունի հաղորդակցվել նաև ռուսերեն լեզվով: Այդ օրն անմոռաց կմնա ներկաներիս հիշողության մեջ:

**Զուլիեպա ՄԻՂՈՅԱՆ Ծուղ**

ՀԱՆԳԻՊՈՒՄ

ՀԻՆԱՎՈՒՐՑ ՇՈՒՇԻԻ ՆՈՐՈՐՅԱ ՀԻՄՆԸ



*Երբ տեղեկացա, որ կոմպոզիտոր Ավետիս Բերբերյանը հայոց հինավուրց բերդաքաղաք Շուշիի հիմնի վրա է աշխատում, որոշեցի առաջին իսկ պատեհ առիթով հանդիպել և գրուցել նրա հետ: Թեպետ խորապես ծանոթ չէի նրա ստեղծագործությանը, բայց ազգանունն ինձ մտովի տարավ Արևմտյան Հայաստան, Պոլսի Գատը գյուղի հայտնի Պերպերյան վարժարան, որի հիմնադիրը բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախոս, տնտեսագետ Ռեթես Պերպերյանն էր: Նրա որդին՝ Օմնիկ Պերպերյանը, եղել է հայտնի կոմպոզիտոր և դիրիժոր, իսկ գերդաստանը հարուստ էր նշանավոր մտավորականներով՝ մանկավարժ, խմբավար, ջութակահար, կոմպոզիտոր Համբարձում Պերպերյան, մանկավարժ, երաժշտագետ, խմբավար, հոգեբան, փիլիսոփա Շահան Պերպերյան և շատ ուրիշներ: Ներքին մի ձայն ասես ինձ հուշում էր, որ Ա. Բերբերյանն էլ ինչ-որ աղերսներ ունի այս նշանավոր տոհմի հետ, համեմայնդեպս, կասկածից վեր էր նրանց ուղղակի ոգեծառանգորդ լինելը: Եվ այնքան էլ զարմանալի չթվաց, երբ մեր գրուցից պարզվեց, որ նրա արմատները ձգվում են մինչև Արևմտյան Հայաստան: Թուրքական յաթաղանից մագապործ եղած հայրական կողմը ապաստանել է Հունաստանում և առաջին ներգաղթի օրերին՝ 1946-ին, բռնել հայրենադարձության ճամփան: Մայրական կողմը վանի շրջանից է նրանք միանգամից գաղթել և հաստատվել են Արաքսի այս ափին... «Հայրական կողմի մեր գերդաստանը բավական մեծ երաժիշտներ և արվեստագետներ է տվել, որոնք մեծ հաջողություններ են ունեցել համաշխարհային մասշտաբով»:*

Լինում են մարդիկ, ում հետ առաջին հանդիպումն այնպիսի տպավորություն է թողնում, ասես հարյուր տարվա ծանոթներ լինեք: Ավետիսը հենց այդպիսին է՝ հաճելի գրուցակից, պարզ ու անկեղծ, առանց ձևանույթի ու մեծամտության: Ասես բարություն է հեղվում նրանից, որն առիցնող հմայքով պարուրում է դիմացինին: Ինչպես հատուկ է մեծ արվեստագետներին՝ թեթև ու մատչելի է շփումներում, շիտակ ու ազնվախոհ, ուստի առաջին իսկ

պահից տրամադրում է գրուցակցին: Անչափ ուրախ եմ, որ առիթ ունեցա ծանոթանալու նաև տիկնոջ՝ Նուշիկ Միքայելյանի հետ, ով սփյուռքահայ անվանի մտավորական, գրող Թորոս Թորանյանի թոռնուհին է: Բազմաշնորհ՝ մի բառով այսպես կարելի է բնութագրել նրան՝ երգչուհուն, ներհուն բանաստեղծուհուն, նկարչուհուն: Երկու արվեստագետների այս երջանիկ միությունը կարծես ամբողջացնում է մեկը մյուսին:

Ա. Բերբերյանը ծնվել է Երևանում, սովորել Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի թավջութակի բաժնում (պրոֆեսոր Լևոն Չաուշյանի դասարան): Արդեն 8-րդ դասարանից սկսել է ստեղծագործել, իսկ պատանեկան առաջին երգերը հյուսվել են հայ ամենամուրթ քնարերգուի՝ Վ. Տերյանի խոսքերով: 13 տարեկան էր, երբ նրա բանաստեղծությունները տեքստերով երգերի շարք ստեղծեց: Շատ շուտով թավջութակին զուգահեռ սկսում է հաճախել էդ. Բաղդասարյանի կոմպոզիտորական դասարան: Դեռևս դպրոցում սովորելու տարիներին դպրոցի պատմության մեջ առաջին անգամ «Սիմֆոնիա» նվագախումբ ստեղծեց: Կոմպոզիտորի այս ուսումը շարունակել է կոմպոզիտորական բաժնում՝ եղգար Գովհաննիսյանի ուսանողն էր: Իրեն երջանիկ մարդ է համարում, քանի որ ուսանել է այնպիսի տաղանդավոր երաժիշտների մոտ, ինչպիսիք են Ավետ Տերտերյանը, Ալեքսանդր Աճեմյանը, Խաչատուր Ավետիսյանը: Այս վարպետների մոտ ուսումնառությունը կարևորում է ոչ միայն մասնագիտական, այլև զուտ մարդկային շփումների առումով: Երկրորդ կարևոր դպրոցը, ըստ կոմպոզիտորի, աշխատանքային գործունեությունն է: Աշխատել է Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախմբի հետ՝ սկզբում որպես գլխավոր դիրիժորի օգնական, ապա՝ նվագախմբի համերգախորհրդակցական և հայերգիայի համերգային խումբի ղեկավար: Աշխատանքը լուրջ խթան էր մասնագիտական աճի համար, քանի որ ստեղծվում էին նորանոր գործեր երգչախմբի և նվագախմբի համար, որոնք թրջի վրա չէին մնում: Այդ ստեղծագործությունները հնչում-կատարվում էին, ծայրագրվում-տարածվում էին, ինչը մեծ բարեբախտություն է ստեղծագործող մարդու համար: Աշխատել է Երևանի «Մետրո» թատրոնում՝ որպես երաժշտական ղեկավար: Այստեղ ծնվեցին երկու մյուզիքլները՝ «Տերն ու ծառան», «Կախարդական արքայազնը», երաժշտություններ կապուցումների համար: Մի խոսքով՝ ժամրային առումով բազմազան է կոմպոզիտորի ստեղծագործությունը:

Ա. Բերբերյանը ներկայումս ապրում ու աշխատում է ԱՄՆ-ի Սան Ֆրանցիսկո քաղաքում, որտեղ «Լուկաս փրոդաքշնը» պայմանագիր է կնքել նրա հետ, համագործակցում է «Փիքսար» հայտնի ընկերության հետ՝ երաժշտություն է գրում անիմացիոն և գեղարվեստական ֆիլմերի համար: Իրեն շատ երջանիկ արվեստագետ է համարում, որ, լինելով հայ մշակույթի կրողը, առիթ է ընձեռնել օտար ափերում

ներկայանալու և ներկայացնելու մեր ազգային մշակույթը, ինչու չէ՝ նաև տարբեր մշակույթների հետ անմիջականորեն շփվելու, նրանցից էլ դասեր առնելու և համաշխարհային մշակույթին ինտեգրվելու առումով:

Վերջին շրջանի ծեռքերումներից է համարում Օբլանդի շատ հայտնի սիմֆոնիկ նվագախմբի հետ իր համագործակցությունը: Պատահական ծանոթությունը նվագախմբի գեղարվեստական ղեկավար Մայքլ Մորգի հետ, ով նաև Սակրամենտոյի ֆիլիարմոնիկ գլխավոր դիրիժորն է, մի նոր էջ բացեց կոմպոզիտորի ստեղծագործական կյանքում: Դիրիժորն արդեն ծանոթ էր Բերբերյանի ստեղծագործություններին և անակնկալ առաջարկ արեց նրան՝ հայտնելով իր մտադրությունը՝ այդ համերգաշրջանում ընդգրկելու նրա ստեղծագործություններից: Դա իսկապես հաճելի անակնկալ էր, քանի որ, ինչպես հայտնի է, նվագախմբերը երկու տարի առաջ են ծրագրում իրենց համերգաշրջանները: Ստացվեց այնպես, որ առաջին բաժինն ամբողջովին կազմված էր հայ կոմպոզիտորի ստեղծագործություններից, իսկ երկրորդ մասում կատարվեց Բրամսի «Գերմանական ռեքվիեմը»: «Եվ ահա համաշխարհային համբավ վայելող «Փարամուն» թատրոնի 4 հազար տեղանոց դահլիճում հրաշքի նման ֆանտաստիկ մի բան կատարվեց, անթաքույց հպարտությամբ պատմում է կոմպոզիտորը: 80 հոգանոց երգչախումբը, որ կազմված էր տարբեր ազգության երգիչներից և հայերեն ոչ մի բառ չգիտեր, երգեց հայերեն... Լեվ-Լեցուն դահլիճում, իսկաբեմից ամերիկացիների շուրթերից հնչում էր. «Ելիք, ո՛վ հայ»: (Դա մեծակտավ ստեղծագործություն է, որը ժամանակին «Սայաթ-Նովա» համահայկական մրցույթում գլխավոր մրցանակ չափեց. խոսք՝ Սարգիս Նաջարյանի, կատարում էին Շուշան Պետրոսյանը և Եղիշե Մանուչարյանը): Բերբերյանի վկայությամբ՝ համերգը շատ մեծ արձագանք գտավ Սան Ֆրանցիսկոյի երաժշտական շրջանակներում ու մասնույում: Հասկանալի է, որ համերգը հայ համայնքի համար չէր նախատեսված, այլ՝ ամերիկյան հանդիսատեսի, ինչն առավել ևս ընդգծում է հայ երաժշտարվեստի և հայ կոմպոզիտորի հաղթանակը:

Ա. Բերբերյանը քանիցս եղել է Արցախում՝ ինչպես համերգներով, այնպես էլ անձնական այցերով: Իր իսկ խոստովանությամբ՝ միշտ էլ Շուշիից առանձնահատուկ տպավորություններով է հեռացել և հերթական այցի ժամանակ, տեղեկանալով Շուշիի ազատագրման 20-ամյակին նվիրված հանդիսությունների մասին, ինքնըստինքյան հղացավ Շուշիի հիմնը գրելու գաղափարը: ԼԳԴ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Ն. Աղաբալյանը սիրով արձագանքեց և ընդառաջեց կոմպոզիտորին: Վերջինս մեկնեց Միացյալ Նահանգներ՝ իր գործունեության հետ կապված խնդիրներով, և այնտեղ էլ ծնվեց հիմնը: Տեքստի հեղինակը Նուշիկ Միքայելյանն է: «Չեն ուզում ինքս իմ աշխատանքին գնահա-

տական տալ, բայց հզոր հիմն է ստացվել, շատ վեհ ու հպարտ՝ քաղաքին արժանի»,- մեզ հետ գրուցում ասաց հեղինակը: Երբ հետաքրքրվեցինք ստեղծագործական ընթացքով, նա պատասխանեց.

- Նախարարն ինձ մի գիրք նվիրեց Շուշիի մասին, որը մի շնչով ընթերցվեց: Փոքր, նուրբ դետալ է, բայց զգացմունքների առումով շատ օգնեց ինձ: Իհարկե, մենք տեղեկություններ ունեինք քաղաքի մասին, սակայն գիրքը բազում բացահայտումներով հարստացրեց մեր գիտելիքները, ասես հետ քայլեցինք պատմության քառուղիներով, և մեր մտապատկերում հառնեց մի բացառիկ քաղաք՝ իր եզակի մշակութային և ռազմավարական նշանակությամբ: Ամեն անգամ, երբ գալիս եմ Դարաբաղ, այցելում եմ Շուշի, իսկ այստեղ անհուն է անտարբեր մնալ: Անպայման մի գերբնական դաշտում ես հայտնվում, ու մի տեսակ զգացմունքախեղ ես լինում: Չես կարող անհույս քայլել այդ քաղաքի փողոցներում, ամեն մի շինությունը՝ թեկուզ ավեր ու փլատակ, մեր նախնիների ճարտարապետական համաճարի ու կառուցողական ճաշակի մասին է վկայում: Փռաք Տիրոջը, գիրքը շատ օգնեց ինձ ներքին ապրումների և ստեղծագործական տեսակետից, նկարչական լեզվով ասած՝ վրձնահարվածները ճիշտ և տեղին անելու համար: Իսկ ներշնչանքի աղբյուրը իհարկե քաղաքն է՝ իր յուրահատուկ ոգեղեն մթնոլորտով, նրա բնությունը, աշխարհագրական դիրքը, հատկապես ուղղաձիգ կիրճը խնթաքանում է ինձ: Կրկնում եմ՝ Շուշին բացառիկ քաղաք է, երևույթ. ամեն քար, ամեն շինություն արվեստի կնիքն է կրում: Այնպիսի մոգական ուժ ունի, որ ինչքան էլ ավերել, հրի ու սրի են մատնել, դարձյալ չեն կարողացել այդ հույակերտ քաղաքը ոչնչացնել, նա մեծագույն հպարտությամբ նորեն կանգուն է ու անկոտրում: Տեսե՛ք՝ ինչպիսի արժեք է ունեցել նա, որ թե՛ պարսիկները, թե՛ թուրքերը, թե՛ ռուսները ձգտել են գտնվել այս քաղաքում, տիրել նրան և տեղ ունենալ այստեղ:

- *Բացի Շուշիի հիմնից, ձեր ստեղծագործական կյանքում ուրիշ անդրադարձներ եղե՞լ են Արցախին:*

- 1989թ. ազգային վերելքի ժամանակ գրել եմ մի ստեղծագործություն, որը կոչվում է «Ղարաբաղ», քայլերգ եմ գրել երգչախմբի, նվագախմբի համար, բայց շարունակական չեղավ: Եվ հետո քանակալ չի որոշում ստեղծածիդ արժեքը, ամեն դեպքում ես հպարտ եմ, որ քսան տարի անց ես նորից անդրադարձա և արեցի այս գործը:

- *Ձեր երաժշտության գունային զանման եթե բառերով վերարտադրելու լինեիք, ի՞նչ գույներ կառանձնացնեիք:*

- Շատ ակտիվ գույներ. որևէ գույն չեմ առանձնացնի, բայց նաև մեղմության, հեզության, հանդարտության մեջ անգամ ակտիվ են գույները. գույների և երանգների խառնարան է իմ երաժշտությունը...

ՄԵԼԱՆԿԱ ՄԻՆՈՒՅԱՆ

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՄՈՒՐԱԿ

(Երբ ագիտիկը տեսնում ենք երեխաների աչքերով)

12 ➤ հարազատ կրթության, դպրոցական կյանքի ու առօրյայի մասին: Դպրոցը նրանց համար երկրորդ տունն է, որովհետև այստեղ են ձևավորվում նրանք՝ որպես հասարակության լիարժեք անդամ: Դպրոցը երեխայի ընկալումներում երկրորդ տուն կարող է դառնալ միայն ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ դրդապատճառի դրական համակարգ ձևավորելու պարագայում: Երբ հաշվի ենք նստում երեխայի հետաքրքրությունների ու ցանկությունների հետ, գտնում նրան հուզող հարցերի պատասխանները, օգնում հաղթահարել առկա դժվարությունները:

Ուսանելի ու հետաքրքիր է «Նամականի» բաժինը, որտեղ ներկայացված է երեխաների հետաքրքրությունների շրջանակը. ում հետ են նախընտրում շփվել, կիսվել իրենց տպա-

վորություններով, գրել լավ ու վատ մարդկանց արարքների, լավը կատարելու և վատից խուսափելու մասին:

«Չեքիաթներ, առակներ, պատմվածքներ, հանելուկներ» բաժինը մանկության գունագեղ ու բազմերանգ մուլտրակ է, որտեղ երեխաների ընկալումներում պայքարի են ելնում չարն ու բարին, ուժեղն ու թույլը, ծույլն ու աշխատասերը, խորամանկն ու ազնիվը, և վերջում հաղթում է ճշմարիտը: Երեխաների նոր հորինած ստեղծագործություններն իրենց յուրատիպությամբ, վառ երևակայությամբ շարժում են ընթերցողի հետաքրքրությունը: Այստեղ նրանք հեքիաթները ներկայացրել են նոր բովանդակությամբ կամ նոր հանգուցալուծումներով: Կարևորն այն է, որ ամեն մի ստեղծագործության բովանդակության տրամաբանությունը-- ենթադրում է աշխատասիրու-

թյուն, ազնվություն, բարություն և մարդկային այլ բարձր որակների ձևավորում ու դաստիարակում:

Մեծ տեղ է տրված նաև տարվա եղանակների մասին երեխաների մտորումներին: Նրանցից յուրաքանչյուրն իր ձևով է արտահայտվում սիրած եղանակի, սիրած ծաղկի, հրաշագործ գարնան ու հեքիաթային Ամանդի մասին: Եվ տարվա բոլոր չորս եղանակներն ուրվագծում են այնպիսի մի պատկեր, որտեղ ծնունդը թվում է՝ մրսում ես, ողջագուրվում ամռան արևին, համբուրում ծաղկավետ գարնան այտը, ամբարում աշնան հեքիաթ մրգերը:

Ստեղծագործելով ու ստեղծագործել սովորեցնելով ընդլայնվում են աշակերտների ստեղծագործական մտածողության սահմանները, հարստանում բառապաշարը, ձևավորվում արժեքային համակարգը:

Հիրավի, մանկավարժական համբերատարությամբ, բժախնդրությամբ ու ոգևորությամբ է պատրաստված «Մանկության մուր-

րակ» մանկական ժողովածուն, ինչն ուսանելի և ընդօրինակելի է մի շարք առումներով. խրախուսել աշակերտակենտրոն ուսուցումը, նպաստել սովորողների ստեղծագործական մտածողության և երևակայության ձևավորմանը, նոր լիցք հաղորդել արտադասարանական միջոցառումներին: Գիրքն, իսկապես, հաճելի անակնկալ էր բոլորիս, հատկապես տարրական դպրոցի ուսուցիչների ու աշակերտների համար: Ընդհանրապես երիտասարդ, ակտիվ ու եռանդուն ուսուցչուհի Լիանա Ծատրյանին՝ այսպիսի շնորհակալ աշխատանքի համար: Սոսկ մանկավարժական մեծահոգության, բարեգթության և ուսուցման ու դաստիարակության գործընթացը լիարժեք կազմակերպելու նախանձախնդիր մոտեցման արդյունքում են ծնվում այսպիսի շիտակ ու գեղեցիկ գործեր:

Ստեղծագործական նոր եռանդ ու նոր մտադրություններ:

**Զոյա ԽԱԶԱՏՐԱԿ**  
Դասվարների քաղաքային



ՏԵՍԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ

ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիկայի դասընթացի կարևոր հասկացություններից են ժամանակը և ժամանակի մեծությունը, որոնց սահմանումները դասագրքերում կոնկրետացված չեն՝ կապված ժամանակի և տարածության կապի բարդ նկարագրության և պատկերման հետ:

Ինչ է ժամանակը՝ կարծես գիտեն բոլորը: Բայց ոչ մեկը չի կարող «ժամանակ» հասկացությանը տալ միարժեք բառային սահմանում՝ չընթացելով «թղթային թուղթ», «փայտային փայտ», «յուղային յուղ» տեսակի ձևակերպումները: Դրանից եզրակացվում է խորը գիտական իմաստ. համաձայն Գեդելի աքսիոմատիկ նկարագրության ոչ լրիվ լինելու հայտնի թեորեմի, նման կրկնաբանական հորինվածքներն իրենցից ներկայացնում են ցանկացած մեծության անհատական ամբողջական առանձնահատկություն:

Հայտնի փիլիսոփա Ավգուստինը (ք.ա. 430-354 թթ.) գրել է. «Ես հիանալի գիտեմ ինչ է ժամանակը, երբ դեռ չեմ մտածում դրա մասին: Բայց արժե մտածել. ահա ես արդեն չեմ իմանում ինչ է ժամանակը»:

Իրոք, առաջին հայացքից ով փորձում է պատասխանել այդ հարցին, հանդիպում է նման դժվարության: Երբ մենք մտածում ենք ժամանակի մասին, առաջանում է զգացողություն, թե այն չափավոր հոսք է, որում ներգրավված են բոլոր իրադարձությունները: Մարդկային հագարանյա փորձը ցույց է տվել, որ ժամանակի հոսքն անփոփոխ է: Թվացել է, թե այն չի կարելի դանդաղեցնել կամ արագացնել, և իհարկե, ետ շրջել: Ժամանակի հասկացությունը երկար մնացել է որպես միայն ներըմբռնողական պատկերացում և փիլիսոփայական քննարկումների վերացական օբյեկտ:

Իսկ ահա Ռիչարդ Ֆեյնմանը ֆիզիկայի իր դասախոսություններում տվել է ժամանակի շատ հասարակ «սահմանում». «ժամանակը՝ ժամերն են»:

Բնությունը նույնպես «խոսում է իր լեզվով», բայց նրանում բառերի դերը կատարում են տարբեր նյութական օբյեկտներ՝ գտնվելով փոխազդեցության մեջ ըստ կանոնների, որոնք անվանում ենք օրենքներ: Այդ օրենքները թույլատրում են գիտության լեզվով ներկայացնել այն իմաստը, ինչ ասում է բնությունը, չնայած նրա ոչ մի բառը չի ենթարկվում բառացի թարգմանվելու կանոնին: Այսինքն՝ ցանկացած գիտական նման է թարգմանչի, որը միայն տիրապետելով օտար լեզվի քերականության կանոններին, համառորեն ձգտում է իր լեզվով ներկայացնել բնության չթարգմանվող բառախաղերը:

Ժամանակը երևույթների և մատերիայի վիճակների հաջորդական փոփոխությունների ձև է: Ժամանակը և տարածությունը մատերիայի համընդհանուր բնորոշ հատկանիշներ են, անբաժան նրանից, անխզելիորեն կապված շարժման և միմյանց հետ: Ահա այն առավելագույնը, որ կարող ենք ասել ժամանակի մասին՝ չընկնելով ավելորդ կրկնաբանությունների մեջ:

Ըստ փորձի գիտենք, որ ժամանակն ընթանում է միայն մի ուղղությամբ՝ անցյալից ապագա: Ըստ այդմ էլ խոսում ենք «ժամանակի սլաքի» մասին: Ինչո՞ւ ժամանակը չի կարելի շրջել հետ: Իսկ եթե այդ հնարավոր է, ապա ի՞նչ կկատարվի աշխարհում, որտեղ անցյալը և ապագան կփոխեն տեղերը:

Սովորաբար հիպոթետիկ աշխարհը, որում ժամանակն ընթանում է ետ, համեմատում են վերջից առաջ ցուցադրվող կինոֆիլմի հետ: Չէ՞ որ կինոպրոյեկտորը նրանում շարժվող ժապավենով ինքնատիպ ժամացույց է՝ ի վիճակի դիտողական կերպով ցուցադրելու իրական երևույթների հաջորդականությունը:

Սակայն դեռևս դա չի վերաբերում բոլոր իրարաբնականություններին, անցքերին, դիպվածներին, պատահույթներին: Օրինակ՝ մոմի այրվելը, որը ցուցադրվում է արագ ընթացքով՝ սկզբում ըստ ժամանակի՝ «այն կողմ», իսկ հետո ըստ ժամանակի՝ «դեպի ետ»: Երբ էկրանին

ժամանակն ընթացել է ուղիղ ուղղությամբ, սովորական ուղղությամբ ընթացել է նաև այրվող մոմով չափվող ժամանակը. նրա չափն աստիճանաբար կրճատվել է, իսկ երբ էկրանային ժամանակը շրջվել է ետ, ետ է շրջվել նաև մոմով չափվող ժամանակը. նա ինքն իրեն մոմալճակից վերածել է մոմի:

Այնուամենայնիվ, ինչ-որ բան այնպես չի եղել, չնայած ժամանակն ընթացել է ետ և կինոպրոյեկտորում (ժապավենը շարժվել է հակառակ ուղղությամբ) ու էկրանի վրա (մոմը չի հալվել, այլ աճել է) բոցն առաջվա պես լուսավորել է շուրջը: Ժամանակի ընթացքի հասարակ մեխանիկական շրջելը ոչ մի կերպ չի ազդել ժամանակի ընթացքի վրա, որի ուղղվածությունը տրվում է մի պրոցեսում, երբ էներգիայի մի տեսակը փոխարկվում է մի այլ տեսակի և որոշվում ջերմադինամիկայի օրենքներով: Կնշանակի, որպեսզի էկրանին շրջվի ջերմադինամիկան, «ժամանակի սլաքը» հարկավոր է վերջից առաջ ցուցադրել՝ ոչ թե ֆիլմի պոզիտիվը, այլ նեգատիվը: Այդ դեպքում մոմի բոցը կնմանվի «սև անցքի», որը դեպի իրեն է ներծծում շրջապատի բոլոր մարմինների կողմից առաքվող էլեկտրամագնիսական ալիքները: Սակայն ալիքներն ինչպե՞ս իմանան որ ուղղությամբ է հարկավոր տարածվել, այն էլ՝ խստորեն համաձայնեցված իրար հետ: Ստացվում է, որ ջերմադինամիկական ժամանակն ընդհանրապես հետ շրջելը հնարավոր չէ:

20-րդ դարի սկզբին պարզվեց, որ ժամանակի վրա «կարելի է ազդել»: Շատ արագ շարժումը, օրինակ, դանդաղեցնում է ժամանակի վազը: Հետագայում պարզվեց, որ ժամանակի հոսքը կախված է նաև ձգողության դաշտից: Ենթադրելով հայտնաբերվել է ժամանակի սերտ կապը տարածության հատկությունների հետ: Այսպես է ծագել և այժմ բուռն կերպով զարգանում է մի գիտություն, որը կարելի է անվանել ժամանակի և տարածության ֆիզիկա:

Ֆիզիկայի զարգացման արդի փուլը բնութագրվում է մատերիայի կազմության ուսումնասիրման հզոր թափով: Եթե 20-րդ դարի առաջին տասնամյակներում հասկանալի է եղել ատոմի կազմությունը և պարզաբանվել ատոմային մասնիկների փոխազդեցության հիմնական առանձնահատկությունները, ապա այժմ ֆիզիկան ուսումնասիրում է քվարկները՝ ենթամիջուկային մասնիկները և խորը թափանցում միկրոաշխարհը: Բոլոր այդ հետազոտություններն անխզելի կերպով կապված են ժամանակի բնության հասկացության հետ: Գիտության և ապագա տեխնոլոգիաների համար կարևոր նշանակություն ունեն ժամանակի այնպիսի հատկություններ, ինչպիսիք՝ նրա դանդաղումը մետրոնային աստղերի մոտ, կանգ առնելը սև անցքերում և արտահայտելը սպիտակում, ժամանակի «փոխակերպման» հնարավորությունը տարածության և հակառակը:

Տիեզերքում տարածությունը եռաչափ է: Եթե մենք ցանկանում ենք ուսումնասիրել մարմնի ոչ միայն գտնվելու տեղը, այլև եռաչափ տարածությունում տեղի ունեցող գործընթացները, ապա պետք է ներառել նաև ժամանակը: Մի ինչ-որ կետում տեղի ունեցող դեպքը բնութագրվում է այդ կետի դիրքով, այսինքն՝ նրա երեք կոորդինատներով ու նաև չորրորդ թվով՝ ժամանակի պահով, երբ տեղի է ունեցել դեպքը: Ժամանակի պահը դեպքի համար հենց չորրորդ կոորդինատն է: Ահա այդ իմաստով էլ ասում են, որ աշխարհը քառաչափ է: Կարևոր է ընդգծել երկու հանգամանք: Առաջինը ժամանակի ինտերվալների և տարածական երկարությունների հարաբերականությունն է, նրանց կախվածությունը հաշվարկման համակարգի ընտրությունից: Երկրորդն այն է, որ ժամանակը և տարածությունը անխզելիորեն կապված են իրար հետ: Նրանք, ըստ էության, հանդես են գալիս որպես մեկ միասնության տարբեր կողմեր քառաչափ տարածություն-ժամանակի: Մինչեյնչտեյնյան

ֆիզիկան չգիտեր այդ անխախտ միասնության անխզելիության մասին: Ինչո՞ւն է այն դրսևորվում:

Առաջին հերթին տարածական հեռավորությունը կարելի է որոշել՝ չափելով այն ժամանակը, որն անհրաժեշտ է, որպեսզի լույսը կամ ընդհանրապես, ցանկացած էլեկտրամագնիսական ալիքներ անցնեն որոշվող հեռավորությունը: Այդ դեպքում շատ կարևոր է, որ ցանկացած էլեկտրամագնիսական ալիքի արագությունն ընդհանրապես կախված չլինի ոչ իր աղբյուրի շարժումից, ոչ էլ այդ ալիքներն անդրադարձնող մարմնի շարժումից և միշտ հավասար է C-ի (C-ն լույսի արագությունն է վակուումում): Ուստի հեռավորությունը ստացվում է որպես արագության հաստատունի և էլեկտրամագնիսական ազդանշանի անցման ժամանակի արտադրյալ: Մինչեյնչտեյնյան տեսությունը չգիտեին, որ լույսի արագությունը հաստատուն է և մտածում էին, որ հեռավորությունը որոշելիս այդպես վարվել ուղղակի հնարավոր չէ:

Իհարկե, կարելի է վարվել հակառակ կերպ՝ լուսային ազդանշանով չափել այն ժամանակը, որ անցնում է հայտնի հեռավորությունը: Տարածության և ժամանակի միասնության կարևոր դրսևորումը կայանում է նրանում, որ մարմնի արագության մեծացման հետ ժամանակի ընթացքը նրանում դանդաղում է

$$\left( t = \frac{t_0}{\sqrt{1 - \frac{v^2}{c^2}}} \right)$$

ստույգ համապատասխան նրա երկայնական (շարժման ուղղությամբ) չափերի նվազման  $\left( l = l_0 \sqrt{1 - \frac{v^2}{c^2}} \right)$ :

Եյնշտեյնի կողմից ստույգ ընդգծվել է տարածության և ժամանակի հատկության բնույթը, նրանց գոյության անհնարիությունը առանց մատերիայի:

Բանաձևերի բարդ է դիտողական կերպով ներկայացնել քառաչափ աշխարհը: Երկչափ պատկերները պատկերելիս դժվարության չենք հանդիպում, դրա համեմատ որոշ չափով դժվար է եռաչափ մարմինները պատկերելը: Ինչ վերաբերում է քառաչափ ֆիզիկային, որը պատկերելու, ասպա երբեմն դա շատ դժվար է նույնիսկ իրենց ամբողջ կյանքում հարաբերականության տեսությամբ զբաղվող մասնագետների համար: Այսպես, անգլիացի հայտնի ֆիզիկոս, տեսաբան, հարաբերականության տեսության խոշորագույն մասնագետ Սթիվեն Յոնգինգը ասել է. «Հնարավոր չէ պատկերացնել քառաչափ տարածությունը: Ես ինքս դժվարությամբ եմ պատկերացնում ֆիզիկային եռաչափ տարածությունում»: Դրա համար մարդը, որը դժվարության է հանդիպում քառաչափությունը պատկերացնելու մեջ, չպետք է վշտանա: Սակայն մասնագետները հաջողությամբ են օգտագործում տարածություն-ժամանակ հասկացությունը: Այսպես, տարածություն-ժամանակի կարելի է գծով պատկերել ցանկացած մարմնի շարժում: Երբ հորիզոնական առանցքով (աբսցիսների) պատկերում ենք հեռավորությունը տարածությունում մի ուղղությամբ, ուղղաձիգով (օրդինատների առանցք) պատկերվում է ժամանակը: Ժամանակի յուրաքանչյուր պահի համար նշում ենք մարմնի դիրքը: Եթե այն մեր «աբսոլյուտորիայում» հանգիստ է, այսինքն՝ նրա դիրքը չի փոխվում, ապա դա գրաֆիկում պատկերվում է ուղղաձիգ գծով: Եթե մարմինը շարժվում է հաստատուն արագությամբ, ապա կատանանք թեք ուղիղ: Կամայական շարժման դեպքում ստացվում է կոր գիծ: Այն ստացել է համաշխարհային գիծ անվանումը: Ընդհանրապես, ժամանակը և տարածությունը հարաբերականությունում կարելի է դանդաղեցնել, որքան մոտենում են մեր ժամանակաշրջանին, այնքան անսովոր են ստացվում հայտնագործությունները, իսկ ավելի դժվարանում են հասկացությունները դիտողական կերպով պատկերելու հնարավորությունները:

Այսպիսով, կասկած չի կարող լինել գրավիտացիոն դաշտում ժամանակի դանդաղելու մասին: Շատ հետազոտություններում փոփոխությունը չնչին է, բայց կան դեպքեր, երբ ժամանակի վազքի տարբերությունը հսկայական է: Համաձայն ժամանակակից գիտության պատկերացումների՝ առանձին տարածություն և առանձին ժամանակ գոյություն չունեն. կա միասնական «տարածություն-ժամանակ» հասկացություն: Ժամանակի ընթացքը տարբեր հաշվարկման համակարգերում տարբեր է, ժամանակը հարաբերական է: Ծանոթանալով ֆիզիկայի հաջողություններին, որքան մոտենում են մեր ժամանակաշրջանին, այնքան անսովոր են ստացվում հայտնագործությունները, իսկ ավելի դժվարանում են հասկացությունները դիտողական կերպով պատկերելու հնարավորությունները:

Բախարյուր ԴԱՎԹՅԱՆ

